ՀՏԴ : 929:947.925 Հովհաննես Դրասխանակերտցի

Doi:10.54503/0135-0536-2023.2-3

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑԻՆ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ*

ՎԱՐԴԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Հովհաննես Դրասխանակերտցի, Սմբատ Ա, Աշոտ Երկաթ, Յուսուֆ, միասնություն, հաշտարար միջնորդություն, իշխաններ, ներիշխանական կռիվներ, քաղաքական ամբողջություն, գաղափարախոս, հալածանք, նամակագրություն, Բյուզանդիա, Դվին, Վասպուրական, արաբական ասպատակություն:

Նախաբան

IX դարի վերջին և X դարի առաջին քառորդին նորաստեղծ հայկական պետականության պահպանման համար պայքարում կարևոր դերակատարություն է ունեցել միջնադարյան Հայաստանի կրոնական ու քաղաքական նշանավոր գործիչ, պատմաբան, կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին (898–925): Նա հայոց անկախ թագավորության հռչակման (885) ականատեսներից էր ու Հայաստանի քաղաքական ամբողջականության համար մղվող պայքարի գործուն մասնակիցը: Դրասխանակերտցին գործել է դարաշրջանային բնույթ ունեցող մի պատմափուլում, երբ արտաքին և ներքին թշնամիների դեմ պայքարում վճռվում էր հայոց պետականության շարունակականության հարցը: Երկրի քաղաքական իշխանությունը՝ ի դեմս հայ Բագրատունիների, եկեղեցու հետ դաշնակցած վարում էր Հայաստանի համակենտրոնացման քաղաքականություն, որը բախվում էր դարաշրջանին բնորոշ տեղական ավատատիրական իշխանությունների ապակենտրոն նկրտումներին: Հայաստանում տեղի էր ունենում քաղաքական համակարգի կերպափոխում. կենտրոնաձիգ պետությունը վերածվում էր տեղական իշխանությունների ավատատիրական դաշնության[1]: Ձգտելով անկախ իշխանությունների ստեղծման՝ հայ նախարարական տները դավադրություններ էին լարում և՛ թագավորի, և՛ միմյանց դեմ, մեկմեկու ձեռքից հափշտակում էին կալվածներ, բերդեր, «թագավոր»-ի տիտղոս ստանալու համար անցնում թշնամու կողմը: Երկրում բացակայում էր համընդհանուր շահի գիտակցումը:

---

* *Ներկայացվել է 25. I. 2023 թ., գրախոսվել է 30. I. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

[1] *Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. 2016, 98–99:*

Հովհաննես Դրասխանակերտցու հոգևոր-քաղաքական գործունեության սկիզբը

«Պատմաբան» անունով հայտնի Դրասխանակերտցին իր ծանր և հալածական կյանքի համար ստացել է «Մաշեալ» մականունը[2]*: Մատենագիրները նրան հիշում են նաև Հովհաննես Դվնեցի, Հովհաննես Գառնեցի անուններով*[3]*: Սակայն նա հայտնում է, որ ինքը «հայրենաւք ի մեծ դաստակերտէ Դրասխանակերտէ» է*[4]*, և ենթադրաբար ծնվել է IX դարի 40–50-ական թվականներին: Ապագա կաթողիկոսն «ի մանկութենէ» աշակերտել էր ժամանակի նշանավոր հոգևոր գործիչ Մաշտոց վարդապետին, որին, ինչպես ինքն է ասում, եղել է «արեան հարազատ եւ մերձաւոր»: IX դարի 60-ական թվականներին Դրասխանակերտցին ուսանել է Արտավազդի և Սևանի վարդապետարաններում և, ինչպես վկայում է Թովմա Արծրունին, «սնեալ եւ ուսեալ առ ոտս սրբոյն Մաշտոցի, նորին հրահանգեալ կրթարանի ուսումնասիրութեանն վարժիւք ոտոգացեալ, այր քաղցրաբարոյ եւ հեզահայաց»*[5]*: Ստույգ տեղեկություններ չկան, թե որոնք են եղել «կրթարանի ուսումնասիրության վարժությունները», սակայն Սևանի ճգնակյաց վանականից նա, անշուշտ, ստացել է խիստ կրոնական կրթություն, դարձել քաջածանոթ Սբ. Գրքին և հայ մատենագրությանը, ուսումնասիրել հին աշխարհի գրականությունն ու փիլիսոփայությունը, վարժվել հռետորական արվեստին*[6]*: Այնույնյաց հռչակավոր վարդա-*

---

[2] *Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ. 1956, 336, Ա ճ ա ռ յ ա ն. 1946, 558:*

[3] *Ասողիկը հայտնում է, որ Հովհաննես կաթողիկոսը Դվինից է (Ա ս ո ղ ի կ. 2010, 742: Հմմտ. Ս տ ե փ ա ն ն ո ս ի Սիւնեաց ե պ ի ս կ ո պ ո ս ի. 1861, 184): Այլ մատենագիրների վկայություններով՝ Հովհաննես Դրասխանակերտցու ծննդավայրը Գառնին է (Ա ն ե ց ի եւ շարունակողներ. 2014, 169, Գ ա ն ձ ա կ ե ց ի. 1961, 82): Պատմաբան Պ. Հովհաննիսյանի ենթադրությամբ՝ այս երկու բնակավայրերի հիշատակությամբ հեղինակները ձգտել են մեծացնել կաթողիկոսի ծննդավայրի նշանակալիությունը:*

[4] *Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 608–609: Պատմահայր Խորենացու հավաստմամբ՝ Դրասխանակերտն եղել է «զմեծ դաստակերտն Արտաշիսի», որը Տրդատ Մեծը (298–330) ժառանգության իրավունքով շնորհել է քրիստոնեություն ընդունած Կամսարի տոհմին (Խ ո ր ե ն ա ց ի. 1991, 241: Հմմտ. Եղիշէի վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին. 1957, 79): Դրասխանակերտը, ըստ հայագետ Ա. Սահակյանի, Երվանդ Վերջինի (220–201) Շիրակում կառուցած հոգևոր մայրաքաղաք Բագարան քաղաքի վաղ պաշտոնական անունն է, որը IX դարից դառնում է Բագրատունիների առաջին մայրաքաղաք: Նա հիմնավորում է Դրասխանակերտ և Շիրակի Բագարան քաղաքների նույնությունը՝ նշելով, որ միևնույն քաղաքի երկու անվանումներից վաղ պաշտոնականը Դրասխանակերտն է, իսկ ժողովրդականն ու ավելի ուշ պաշտոնականը՝ Բագարանը (Ս ա հ ա կ յ ա ն. 2005, 295–302): Պատմաբան Ա. Փերիխանյանի ստուգաբանությամբ՝ Դրասխանը Երվանդ Աստծո քրմական-վարդապետական մակդիրն է, նշանակել է «արևի հայացք»* (П е р и х а н я н. 1993, 32–34)*:*

[5] *Ա ր ծ ր ո ւ ն ի եւ Ա ն ա ն ո ւ ն. 2010, 228, 249:*

[6] *Ա բ ե ղ յ ա ն. 1968, 480, Բ ա խ չ ի ն յ ա ն. 1973, 43: Հին աշխարհի գրականությանն ու փիլիսոփայությանը Դրասխանակերտցու ծանոթ լինելու մասին է վկայում այն փաստը, որ իր «Պատմության» մեջ մի քանի անգամ հիշատակում է*

պետարանի ավանդույթները շարունակող կրթարանում, որն ապահովված էր «զբազմութիւն գրոց սրբոց»[7]-ով, հոգևոր առարկաներից բացի, դասավանդվել են քերականություն, փիլիսոփայություն և ճարտասանություն, այսինքն՝ Եռյակ արվեստները: Անանուն Արծրունին Հովհաննես Դրասխանակերտցուն բնութագրում է «զաւրաւոր եւ մտահարուստ հռետոր»[8]: Ասողիկը նրան անվանում է «ճարտասան», իսկ Կիրակոս Գանձակեցին՝ «այր իմաստուն և բանաւոր»[9]: XVII դարի ժամանակագիր Դավիթ Բաղիշեցին նրան բնորոշում է «անյաղթ փիլիսոփայ եւ պատմագիր»[10], XII դարի մատենագիր Սամվել Անեցին բարձր է գնահատում նրա ստեղծագործությունն ու այն որակում «Գեղեցկաբան շարադրութիւն»[11]:

Դրասխանակերտցու՝ մինչկաթողիկոսական շրջանի գործունեության մասին հայտնի է, որ Գևորգ Բ Գառնեցի (877–897) կաթողիկոսի օրոք նա «եպիսկոպոս դրան» կարգավիճակով հայրապետանոցի պաշտոնեության անդամ էր: Երբ 894 թ. Ատրպատականի ամիրա Աֆշինը բանտարկեց հաշտարար առաքելությամբ իր մոտ եկած Գևորգ Գառնեցուն, կաթողիկոսարանի գործերի վարչությունն ամբողջովին իրականացնում էր Հովհաննեսը[12]: Նա հավաքագրեց պահանջված փրկագինը և, Աղվանքի Համամ իշխանի միջոցով փոխանցելով Աֆշինին, բանտից ազատեց կաթողիկոսին: 897 թ.՝ Գևորգ Գառնեցու մահից հետո, կաթողիկոս է ընտրվում Դրասխանակերտցու ուսուցիչ և «ըստ մարմնոյ» նրան ազգակից Մաշտոց Եղիվարդեցին: Վերջինիս կաթողիկոս դառնալու գործում նույնպես կարևոր դեր է ունեցել Հովհաննես եպիսկոպոսը, ով մեծ ազդեցություն ուներ վեհարանի պաշտոնեության վրա[13]: Սակայն Մաշտոցին վիճակված չէր երկար պաշտոնավարել, և յոթ ամիս անց նա մահանում է: 898 թ.[14] Սմբատ Ա (890–914) արքայի և «նախարարակոյտ բազմութեան» պահանջով հայրապետական գահին է նստում Հովհաննես Դրասխանակերտցին[15]:

Նորընծա կաթողիկոսը հենց սկզբից բախվում է Ատրպատականի Սաջյան ամիրա Աֆշինի մեքենայություններին, որը փորձում էր Հայաստանում ներիշխանական հակասություններ հրահրելու և հայոց արքայի դիրքերը թուլացնելու միջոցով կասեցնել զորեղացող պետականության ընթացքը: Սադրանքներով և քսություններով Աֆշինին հաջողվում է թշնամություն բորբոքել

Հոմերոսին և նրա «Իլիականը», մեջբերումներ կատարում Սոլոնից (Ք. ա. 638–558 թթ.) (Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 372, 508, 511):

[7] *Ա ս ո ղ ի կ. 2010, 742:*

[8] *Ա ր ծ ր ո ւ ն ի ե ւ Ա ն ա ն ո ւ ն. 2010, 281:*

[9] *Գ ա ն ձ ա կ ե ց ի. 1961, 82:*

[10] *Մ ա ն ր ժ ա մ ա ն ա կ ա գ ր ո ւ թ յ ո ւ ն ն ե ր, XIII–XVIII դդ. 1956, 336, Բ ա խ չ ի ն յ ա ն. 1973, 43:*

[11] *Ա ն ե ց ի ե ւ շ ա ր ո ւ ն ա կ ո ղ ն ե ր. 2014, 155:*

[12] *Զ ա մ չ յ ա ն. 1984, 717:*

[13] *Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 1187, Բ ա խ չ ի ն յ ա ն. 1973, 43:*

[14] *Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. 2014, 46, Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. 2020, 170:*

[15] *Պ. Անանյանը հայտնում է, որ Հովհ. Դրասխանակերտցու ընտրության առիթով Կ. Պոլսի Անտոն Բ պատրիարքը (893–901) 897 թ. Սմբատ Ա-ին նամակով պատվիրում է հայոց նոր կաթողիկոսի ձեռնադրությունը կատարել Կ. Պոլսում: «Այս յանձնարարութիւնը առաջին բացայայտ արտայայտությունն է Քաղկեդոնի 28-րդ կանոնին կարգադրութեան, որ Հայ եւ Արեւելքի բոլոր «միաբնեայ» եկեղեցիները մերժած էին»,– գրում է Պ. Անանյանը (Ա ն ա ն ե ա ն. 1997, 57):*

Արծրունի իշխանների միջև: Սմբատ Ա-ի հորդորով Հովհաննես կաթողիկոսը հանդիպում է հակամարտող իշխաններին՝ հուսալով «թերեւս կարողութիւն լիցի փակել զկորստական դուռնն»: Արյունակից Արծրունիներ Աշոտին և Հասանին հաշտեցնելու համար պատվախնդիր կաթողիկոսը ստիպված է լինում դիմել կտրուկ միջոցների՝ ընդհուպ «զաւետարանական իշխանութիւնն գործարկեալ»:

Հայոց կաթողիկոսի Ատրպատականյան բանագնացությունը

Աֆշինի մահից հետո՝ 901 թ., Ատրպատականի ամիրայության գլուխ է անցնում նրա եղբայր Յուսուֆ իբն աբու Սաջ Դեղադը, որը մտադիր էր ձեռք բերել Հայաստանից խալիֆայությանը վճարվող հարկերը գանձելու իրավունքը: Հասկանալով, որ այդ ամենը կարող է խաթարել երկրի բարեկեցությանն ու անվտանգությանը՝ Սմբատ Ա-ն 902 թ. դիմում է Ալի ալ-Մուքթաֆի Բիլլահ խալիֆին (902–908) և իրավունք ստանում հարկերն ուղարկել Բաղդադ՝ առանց Ատրպատականի սաջյանների միջնորդության[16]*: Սակայն Յուսուֆը մտադիր չէր հրաժարվել Հայաստանի նկատմամբ ունեցած իր հավակնություններից, ուստի Աղվանքի վրայով արշավում է Հայաստան: Սմբատը հարկադրաբար ընդունում է Յուսուֆի՝ հարկերն Ատրպատականի միջոցով վճարելու պայմանը: Արժեքավոր նվերներ փոխանակելով՝ նրանք 903 թ. խաղաղության դաշինք են կնքում, որը նպաստավոր էր նաև Հայ եկեղեցու համար: «Բայց եւ ես եւս պատուեցայ պատուասիրաբար յոստիկանէն զգեստուք ըստ աւրինի կարգիս. եւ ջորի պաճուճաբար ոսկեզարդ զարդուք առաջի մատուցանելով ինձ»* [17]*,– խոստովանում է պատմաբան կաթողիկոսը: Հայոց կաթողիկոսին մեծարանքի և պատիվների արժանացնելը վկայում է ոչ այնքան Յուսուֆի քաղաքավարության, որքան հայոց հոգևոր առաջնորդի հեղինակության և ազդեցության մասին: Սաջյան ամիրան կարևորում էր Հայոց կաթողիկոսի դերը երկրի կյանքում և արտաքին հարաբերություններում: 903-ից մինչև 908 թ. այն եզակի ժամանակահատվածներից մեկն է, երբ Հայաստանը գարգացման հնարավորություն է ստանում, և երկրի ընդհանուր բարօրության պայմաններում իշխանները «չինէին եկեղեցիս վիմարդ հաստահեղոյս ճուլեալ կրով՝ ի մենաստանս եւ յաւանս եւ յագարակս»* [18]*: Արդեն 908 թ. Հասան Հավնունի իշխանի գլխավորությամբ Սմբատ Ա արքայի դեմ կազմակերպվում է դավադրություն, որը բացահայտվում է, և երազգավորում արքայի «խողխողման» ծրագիրը՝ տապալվում:*

Հայաստանը տրոհելու և թուլացնելու Յուսուֆի ձեռնարկները գործնական արդյունք են տալիս 908 թ.: Նախճավան քաղաքի համար Սյունի և Արծրունի

---

[16] *Հայոց թագավորի առաջարկը շատ ձեռնտու էր խալիֆին, որովհետև այդպես կթուլանային Յուսուֆի դիրքերը, որն ընդվզել էր խալիֆի դեմ՝ անկախանալու նպատակով: Ալ-Մուքթաֆի խալիֆն ուրախությամբ է ընդունում հայոց արքայի առաջարկը և «երեւելի զգեստ արքունական եւ թագ արքայական», բազմաթիվ այլ ընծաներով հանդերձ ուղարկում է Սմբատ Ա-ին: Հայաստանից Աբբասյաններին վճարվող հարկի չափը տարեկան կազմում էր 60 հազ. դիրհեմ, որը մեծ գումար չէր: Հայաստանն ամբողջությամբ իր կողմը գրավելու համար խալիֆը կրճատում է անգամ այդ գումարը* (Тер-Гевондян. 1977, 243)*:*

[17] *Դրասխանակերտցի. 2010, 480:*

[18] *Դրասխանակերտցի. 2010, 481:*

նախարարների վեճը հարմար առիթ էր Սաջյան ամիրայի համար՝ տրոհելու Հայաստանի քաղաքական միասնությունը: Նախճավանը Սյունիներին հանձնելու Հայոց արքայի վճռից խիստ դժգոհ Վասպուրականի իշխան Գագիկ Արծրունին «բազում նուէրս ընծայից եւ պատարագաց պատրաստեալ» ներկայանում է Յուսուֆին: Վերջինիս շատ ձեռնտու էր «քակտումն միաբանութեան նոցա (հայերի– Վ. Ա.)», և նա 908 թ. Գագիկ Արծրունուն թագադրում է որպես Վասպուրականի թագավոր[19]: Վերջինս «թագակերպեալ»[20] վերադառնում է «յաշխարհ իւրոյ տերութեանն»՝ «զկորստական դուռն» բացելով Հայաստանի համար: Այս դեպքերից հետո սպասվում էր Սաջյան ամիրայի հրոսակախմբերի արշավանքը Հայաստան: Ատրպատականի ամիրային Հայաստանի վրա արշավելու մտքից ետ պահելու դիվանագիտական առաքելությամբ 908 թ. վերջին «Սմբատայ եւ այլոց եւս նախարարացն սաղրելոյ» Հովհաննես կաթողիկոսը ուղևորվում է Ատրպատական: Նա ճանապարհվում է մեծաքանակ և մեծարժեք նվերներով, որոնց մասին հայտնում է հետևյալը. «Գնացի ի Պարսս Ատրպատականի առ ոստիկանն դառնացաւղ ընծայիւք եւ պատարագաւք բազմաւք յարքունի թանգարանաց, երեւելի ոսկեճամուկ զգեստուք եւ ի նկարակերտ կանանց ոստայնանկութեանց բազում բազմակոնս կազմեալ, եւ բազում ձիս եւ ջորիս ի զարդս եւ ի զէնս յարդարեալ, այլ եւ գանձս ոսկւոյ եւ արծաթոյ»[21]: Կաթողիկոսի նվերների մեջ կային նաև եկեղեցական գանձարանների թանկարժեք մասունքներ, որոնք ձեռք էին բերվել «ի տանէ սրբարանաց»: Սաջյանների ագահությանը լավատեղյակ կաթողիկոսն այդ կերպ փորձում էր հագուրդ տալ նրանց ընչաքաղցությանը, կանխել «զբղխումն թունից նորա եւ զխառատումն քարանց եկեղեցւոյ սրբոյ եւ զկորստական գերչութիւն ժողովրդոց Քրիստոսի, մարթացից հետի աղագս ինչ խաղաղութեան առ ի նմանէ գտանել»[22]: Շքեղ ընծաներով ժամանած հայոց հոգևոր առաջնորդը պատվավոր ընդունելության և մեծարանքների է արժանանում Յուսուֆի արքունիքում: Նա Հայաստանին խաղաղություն է խոստանում և հանձն առնում հաստատել հաշտություն: Սակայն քիչ անց, «մահացու խարդախութեամբ վտարանդեալ», անակնկալ փոխում է մտադրությունը, կալանավորում հայրապետին՝ բանտարկելով «ի խաւարչտին տեղւոջ եւ շրջապատեալ բազում պահնակաւք»: Այս կտրուկ շրջադարձի պատճառը

---

[19] *Անանուն Արծրունին հաղորդում է, որ Յուսուֆը ոչ միայն թագավորական թագ ու պատիվներ շնորհեց Գագիկին, այլև հռչակեց «թագաւոր ամենայն Հայոց» (Ա ր ծ ր ո ւ ն ի եւ Ա ն ա ն ո ւ ն. 2010, 282): Անանունից բացի, ոչ մի այլ պատմիչ Գագիկին Հայոց թագավոր չի կոչում (Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2014, 115–117): Իրավացի է Վրեժ Վարդանյանը, երբ գրում է, թե Գագիկ Արծրունու՝ ամենայն Հայոց թագավորի տիտղոսը, ըստ էության, «Վասպուրականում տիրող մտայնության արգասիք էր» (Վ ա ր դ ա ն յ ա ն. 1969, 79): Ստ. Օրբելյանի վկայությամբ՝ մինչ այդ Աֆշին ամիրան թագ էր առաջարկել նաև Սյունիքի իշխան Վասակին, սակայն վերջինս «ոչ կամեցաւ ապստամբական անուն ժառանգել» (Ս տ ե փ ա ն ն ո ս ի Սիւնեաց եպիսկոպոսի. 1861, 219):*

[20] *Հեգնական այս ձևակերպումով Դրասխանակերտցին իր բացասական վերաբերմունքն է արտահայտում Գագիկի նկատմամբ:*

[21] *Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 488:*

[22] *Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 488:*

կաթողիկոսը ստույգ չի կռահում, սակայն ենթադրում է, որ դա հետևանք էր «ի սադրելոյ նմա ի մերոց աստի»[23]: Հավանաբար, նա ակնարկում է Սմբատին ընդդիմադիր որոշ հայ նախարարների, որոնց սադրանքով Յուսուֆը բավարար չի համարում մատուցված գանձերն ու գումարը: Կաթողիկոսի պատանդառության փաստը թույլ է տալիս ենթադրել, որ նա Սաջյան կառավարիչներին ոչ միայն նվերներ էր տարել, այլև Հայաստանից հավաքագրված հարկը: Սակայն, ինչպես ցույց են տալիս հաջորդող դեպքերը, Յուսուֆը ստացվածն անբավարար է համարել, և կաթողիկոսին պատանդ վերցնելով՝ պահանջել է փրկագին մեծ գումարներ:

Որոշ ժամանակ անց Յուսուֆին են ներկայանում Գուրգեն և Գագիկ Արծրունիները, որոնք «զպարտս մտերմական սակին վճարեալ, եւ լիապատար թանգարանաց իմն նմա ընծայաբերեալ»[24]: Նրանք պետք է մասնակցեին Յուսուֆի՝ Հայաստան կատարելիք արշավանքին: Հայոց հայրապետը հույս ուներ, որ Գագիկը, «որպէս եւ քրիստոնեական պարտն պահանջէ», կմիջնորդի իրեն ազատ արձակելու համար, սակայն վերջինս, նրան համարելով Սմբատի աջակից, ոչինչ չի անում: Հայոց հոգևոր առաջնորդին արաբական գերության մեջ օգնության ձեռք չմեկնելու փաստը թույլ է տալիս ենթադրել, որ կաթողիկոսի ատրպատականյան օրակարգի հարցերից մեկը եղել է Գագիկի՝ Հայոց թագավոր դառնալու խափանումը: Գագիկը դեռևս այդ ժամանակ Վասպուրականի թագավորն էր (908–943), նրա հաջորդ քայլը պետք է լիներ Հայոց թագավոր նշանակվելը: Պատմիչների վկայությամբ՝ 913–914 թթ. Յուսուֆը երկրորդ անգամ արդեն Գագիկին թագադրում է Հայոց թագավոր[25]:

909 թ. գարնանը Ստ. Օրբելյանի ընութագրմամբ՝ «գազանն անգառագեղ և չունն կատաղի՝ Յուսուփ» մեծ հրոսակախմբով մտնում է Հայաստան և ասպատակում Սյունիքը: Նա ավերում ու «արյան բաղնիքի է վերածում» երկրամասը[26]: Այստեղից Յուսուֆն արշավում է Դվին, որտեղ նրան անձնատուր են լինում Սյունյաց իշխաններ Գրիգոր Սուփանը և Վասակը: Արաբ ոստիկանը Սմբատից նոր հարկեր է պահանջում, հետապնդում նրա ուժերին մինչև Կղարջքի կողմերը: Շղթայված կաթողիկոսին Յուսուֆը, Հայաստանում բանտից բանտ տեղափոխելով, նպատակ ուներ բարոյալքել հայերի դիմադրական ուժը և ահաբեկել ժողովրդին: Դվինի բանտում կաթողիկոսն անմարդկային կտտանքների է ենթարկվում. «Իսկ զիս արգելեալ ի քաղաքին Դվին ի մեռաղս բանտից եւ երկաթի կապարանաց, կրեցի այնուհետեւ ի դահճաց անտի

---

[23] *Յուսուֆը վստահ էր, որ առանց հոգևոր առաջնորդի Հայաստանում կտիրի անիշխանություն* (Գ р е н. 1893, 87)*:*

[24] *Դ р а с х а н а к е р т ц и. 2010, 489:*

[25] *Գագիկ Արծրունու՝ Հայոց թագավոր թագադրվելու մասին վկայում է նաև Հովհ. Դրասխանակերտցին՝ ասելով, որ Փարկևի զորապետի միջոցով խալիֆը թագ է ուղարկում Գագիկին և «երեքկին զնա պսակեալ ի վերայ Հայաստանեայցս» (Դ р а с х а н а к е р т ц и. 2010, 545–546): Ըստ Ասողիկի՝ Գագիկի թագավորության սկիզբը 914 թ. է, քանի որ նա թագավորել է ԻԹ (29) տարի, մինչև ՅՂԲ (943) թվականը (А с о г и к. 2010, 826):*

[26] *Յուսուֆի ներխուժումը Սյունիք տեղի է ունեցել «358 թուականին Հայոց» (909 թ.) «յաւուրս սուրբ պասեքին» (Ս т е ф а н н о с и С и ւ н е ա ц е п и с к о п о с и. 1861, 135–136):*

մահահոտ իմն լուտանաւք գանս եւ բանտս եւ գերարանս եւ արգելարանս ի խաւարչտին տեղւոջ եւ յանձուկ վայրս. այլ եւ ի վիրապս եւ ի վիհս խորոց ընկեցայ սաստիկ եւ դառն կոտանաւք: Եւ պահապանացն սաստիկ աղաղակն ու ճուչն դատափետ միշտ ոչ հեռացեալ հատանէր ի լսելեաց իմոց յերեկոյէ մինչեւ ցառաւաւտն, եւ սակս այնորիկ բարձեալ էր յինէն նինջ արտեւանաց եւ հանգիստ իրանաց իմոց»[27]: 909–910 թթ. անցկացնելով ազատագրության մեջ՝ կաթողիկոսը դիմում է ոստիկանին և խնդրում «ելս հրաման թողութեան»: Նա գերության մեջ իր վիճակը համեմատում է եգիպտական թագավոր Նեկտանեբոսի հետ, որին աստվածները թաքցրել էին ստորգետնյա թագավորությունում, և ինչպես Նեկտանեբոսն աստվածների օգնությամբ «փախեաւ գաղտաբար» պարսիկներից, այնպես էլ իրեն «վերին աւգնականութիւնն առ ի նմանէն (Յուսուֆ ոստիկանից – Վ. Ա.) կորզեաց»[28]: Հավանաբար, հենց 910 թ. պատմաբան-կաթողիկոսը փախչում է Դվինի բանտից: Նրա փախուստի հանգամանքները հայտնի չեն: Լեոն ենթադրում է, թե, իբր, Աշոտ Շապուհյանի անձնատվության թողած ազդեցությամբ Յուսուֆը բանտից ազատ է արձակել Հայոց կաթողիկոսին[29]: Սեփական արժանապատվությունը բարձր գնահատող հայրապետը պարզաբանում է, որ ինքը ձգտում էր դուրս գալ բանտից ոչ թե մահվան վախից կամ խուսափում էր հավատի համար նահատակվելուց, «այլ վասն զի սակս ոսկւոյ տնաւրինէր»: Բանտում եղած ժամանակ «ի բազմաց աւգնականութենէ» նա բավականին գումարներ էր վճարել, սակայն «զզրաղատ գանձուց» մի մասը դեռևս մնում էր: «Այլ ոչ եւս ունէի բնաւ ի ձեռին բաւականի հատուցանել ինչ, եւ ոչ ոք էր՝ որ աւգնէր ինձ»[30], – ցավով խոստովանում է կաթողիկոսը: Փախուստը հասկանալիորեն բարդացրեց Յուսուֆի ու կաթողիկոսի միջև ոչ դյուրին հարաբերությունները: Եվ նա հարկադրված էր շրջել գավառներում, քաղաքներում ու հավաքել պահանջվող տուրքի մնացյալ մասը: Այդ գումարի հավաքագրումն անհրաժեշտ էր բանտում պահվող բազմաթիվ հայ իշխանների փրկության և Սաջյանների ասպատակություններից Հայաստանը ժամանակավորապես զերծ պահելու համար:

Դեգերելով «ի քաղաքէ ի քաղաք»՝ կաթողիկոսն անցնում է Աղվանից երկիր[31], որտեղ հյուրընկալվում է Սահակ Սևադա իշխանին և Աղվանքի Ատրներսեհ թագավորին, որոնք նույնպես «ի ժողովրդենէ մերմէ եւ խաչն արատի

---

[27] *Դրասխանակերտցի. 2010, 490: Դվինում իրականացված հնագիտական պեղումների ժամանակ բացվել են ստորգետնյա հորեր, որոնք ունեին 2,50 մ խորություն, իսկ հատակի տրամագիծը եղել է 3,20 մ: Հորաբերանին դրված է եղել սալաքար: Դրանք ցամաք հորեր էին, վիհ կամ վիրապ, որոնք կոչվում էին նաև գնդան: Այդ գնդաններում պահում էին ծանր հանցագործներին: Այդպիսի մի գնդանում են պահվել Դրասխանակերտցին և հայ բազմաթիվ իշխաններ (Ղ ա ֆ ա դ ր յ ա ն. 1982, 24–25):*

[28] *Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 492, Դ ա ր բ ի ն յ ա ն-Մ ե լ ի ք յ ա ն. 1981, 161:*

[29] *Լ ե ո. 1967, 543:*

[30] *Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 492:*

[31] *Եթե Յուսուֆն ինքը բանտից ազատ արձակած լիներ կաթողիկոսին, ապա հազիվ թե վերջինս հեռանար Հայաստանից, անցներ Աղվանք, ապա՝ Վրաստան (Վ ա ր դ ա ն յ ա ն. 1988, 117):*

մերոյ էին»[32]: Դրասխանակերտցին ծանոթ էր Աղվանքի իշխաններին, քանի որ մինչ այդ նա Գևորգ Գառնեցու (877–897) փրկագնման առիթով հավաքագրված գումարը ինքն էր հասցրել Աղվանք և փոխանցել Համամ իշխանին[33]: Եվ հենց ազգակցության իրավունքով էլ նա բավականին գումարներ է հավաքագրում պարտքերը վճարելու և իր հետևորդներին պահելու համար. «Եւ ի նոցանէն ոչ ինչ սակաւ ծախս ռոճկաց ըստ իւրաքանչիւրումն սակի կարգէր մեզ պարտապանաբար վճարելով զպէտս ամենեցունց»[34]: Աղվանքից կաթողիկոսը տեղափոխվում և բնակություն է հաստատում Գուգարքում՝ «ակն ունելով փրկութեան»: Նրա երկարատև շրջագայությունների ընթացքում Յուսուֆի հրամանով Դվինում 914 թ. չարանենգ եղանակով գլխատվում է Հայոց Սմբատ արքան: Հովհաննես կաթողիկոսն արքայի նահատակության առիթով սահմանում է հատուկ տոն[35]:

Դեռևս հոր՝ Սմբատ Ա-ի կենդանության օրոք թշնամու դեմ պայքար էր սկսել Աշոտ թագաժառանգը, ով «ըստ քաջապինդ արութեան իւրոյ Երկաթ անուանեցաւ»[36]: Աշոտն ազատագրում է Հայաստանի զգալի մասը, ոչնչացնում բազմաթիվ արաբ հրոսակախմբեր և վերագրավում բոլոր այն ամրոցները, որոնք Յուսուֆը խլել էր հորից: 914 թ.՝ Սմբատ Ա-ի եղերական նահատակությունից հետո, հայոց ավագանին թագավոր է ճանաչում Աշոտ Բ-ին (914–928), որին թագադրում է Կղարջքի թագավոր Ատրներսեհը (899–923)[37]: Աշոտ Բ-ի նախաձեռնած համաժողովրդական պայքարում աչքի են ընկնում բազմաթիվ նահատակներ՝ Միքայել Գուգարացին, Դավիթ ու Գուրգեն Գնունի եղբայրները և ուրիշներ, որոնց համար կաթողիկոսը մարերի ամսի 27-ը հիշատակի օր է սահմանում: Ցավոք, տոնացույցերը հիշյալ մարտիրոսների տոնը չեն նշում, իսկ «Յայսմավուրք»-ում կա միայն Գնունի եղբայրների հիշատակի օրը՝ մարերի 20-ին կամ մայիսի 27-ին, ինչը շարժական տոմարով հունվարի 25-ին է[38]: Երկրի վիճակը շատ ծանր էր, բայց «այդուհանդերձ Դրասխանակերտցու հարկադրական թափառումներն արաբական հալածանքների պատճառով երկարաձգվում էին, և «ակն կալեալ եւ սպասեալ փրկութեան», նա գտնվում էր Գուգարքում, «մերձ առ մեծիմաստն Ատրներսեհ թագաւորն կացելոյ յայնմ նահանգի»[39]:

---

[32] Դրասխանակերտցի. 2010, 492: Ուշագրավ այս բնորոշմամբ կաթողիկոսը շեշտում է Հայոց եկեղեցու գերակայությունն Աղվանքի եկեղեցու նկատմամբ և հայերի հետ նրանց մեկ ընդհանուր կրոնական համայնք լինելու հանգամանքը (Սարգսյան. 1991, 135):

[33] Drashanakertci. 1987, 12.

[34] Դրասխանակերտցի. 2010, 492:

[35] Յայսմաւուրք. 1730, Մարերի Ի և մայիսի ԻԷ:

[36] Ասողիկ. 2010, 748: Աշոտի անսովոր մեծ ֆիզիկական ուժի մասին են վկայում նաև բյուզանդական հեղինակները (Թեոփանեսի շարունակող. 1990, 228):

[37] Եղիազարյան. 2016, 24–25:

[38] Յայսմաւուրք. 1730, Մարերի Ի և մայիսի ԻԷ, Օրմանեան. 2001, 1217:

[39] Դրասխանակերտցի. 2010, 521: Գուգարքը Կղարջքի թագավորության մաս էր կազմում, իսկ Կղարջքի թագավոր Ատրներսեհն արդեն հորջորջվում

Հայ-բյուզանդական հոգևոր առաջնորդների նամակագրությունը

Հարավային Կովկասում տեղի ունեցող իրադարձություններին ուշադիր հետևող բյուզանդական իշխանությունները շտապում են օգտվել պատեհ իրավիճակից: Նրանք զանազան միջոցներով խրախուսում են այդտեղ ապրող ժողովուրդների ազատագրական պայքարն արաբական տիրապետության դեմ: Դա հետագայում Արևելքում Բյուզանդիայի ագրեսիվ քաղաքականության սկիզբն էր[40]: Բյուզանդիայի նվաճողական քաղաքականության մեջ մեծ դերակատարություն ուներ կայսերական եկեղեցին, որն այդ ժամանակ գլխավորում էր պատրիարք Նիկողայոս Միստիկոսը (901–907, 912–925): Վերջինս 913 թ. արքունիքի հանձնարարությամբ նամակ է գրում Հայոց կաթողիկոսին՝ սկիզբ դնելով հայ-բյուզանդական եկեղեցական նոր երկխոսության[41]: Բարեկամական ոճով շարադրված այս նամակը, Լեոյի բնորոշմամբ, «դիվանագիտական գրություն»[42] է, որում Պոլսի քահանայապետը եկեղեցական կամ դավանական միաբանության խնդիրներ չի արծարծում: Զգացմունքային և մխիթարական խոսքերով լի այս նամակը կովկասյան ժողովուրդների հակաարաբական շարժումները խթանելու նպատակ էր հետապնդում: Ողջունելով «Հայոց Մեծաց» կաթողիկոս Հովհաննեսին՝ կայսերական եկեղեցապետն արտահայտում է իրենց «յոյժ տրտմութիւն»-ը Հայաստանին, Վիրքին և Աղվանքին պատուհասած դժբախտությունների առթիվ: Ստեղծված վիճակի պատճառը, ըստ նրա, այդ երկրների իշխանների միջև ներքին համաձայնության և համերաշխության բացակայությունն է: Նա փրկությունը տեսնում է միայն իշխանների միաբանության մեջ և թախանձում «յաւետ սիրելի եղբաւր մերում» Հովհաննեսին ամեն ջանք գործադրել «դադարեցուցանել զոնէ ի հակառակութենէ չարութեանդ որ ընդ միմեանս. եւ մի տալ թոյլ մնալ ի վայրենի գազանութեանդ, որք բարկացեալք եւ դիմեալք են ի սպանումն միմեանց եւ դառնալ ի մարդկային մտածութիւնս եւ ի քրիստոնէական հանդարտութիւնս»[43]: Պոլսից քրիստոնեական համերաշխության կոչերով նամակներ են հղվել նաև Վրաց թագավոր Ատներսեհին, Աբխազաց թագավոր Կոստանդին Գ-ին (893–922)՝ հորդորելով նրանց դադարեցնել բախումները և միաբանել սիրով ու հաշտությամբ: Միասնական ուժերով նրանք պետք է մարտնչեն «ընդդէմ ամբարիշտ թշնամւոյն՝ որդւոյն Ապուսիճայ»: Միայն այդ դեպքում

էր «Վրաց թագավոր» (Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. 2011, 217): Իր մեկ այլ աշխատության մեջ Ա. Եղիազարյանը կարծիք է հայտնում՝ Գուգարքում այդ ժամանակ ապրում էին Հայ եկեղեցու հետևորդներ, որոնց վրա տարածվում էր Հայոց կաթողիկոսի հոգևոր իշխանությունը (Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. 2018, 68):

[40] *Բ ա ր թ ի կ յ ա ն. 1966, 252:*

[41] *Կարեն Յուզբաշյանը վստահ է, որ պատրիարքի նամակը պահպանվել է բնագրային թարգմանությամբ: Գրյումելը ենթադրում է, որ այն գրվել է 913 թ. հունիս– 914 թ. փետրվար ժամանակային միջակայքում* (Ю з б а ш я н. 1988, 107)*: Նամակի բովանդակությունը, անշուշտ, պատմիչը ենթարկել է մշակման, համապատասխանեցրել երկի ընդհանուր ոճին՝ ստեղծելով ոճային ներդաշնակություն* (Д р а с х а н а к е р т ц и. 1986, 30)*:*

[42] *Լ ե ո. 1967, 553:*

[43] *Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 523:*

Բյուզանդիայի կայսրը օգնություն ցույց կտա և նույնիսկ «առաքեցէ զաւր բազում յաւգնականութիւն», որպեսզի փրկի արևելյան քրիստոնեությունը կորստյան վտանգից:

Ուշագրավ է, որ ոչ ծավալուն նամակում պատրիարքը երկու անգամ շեշտում է Հայոց կաթողիկոսի հոգևոր գերիշխանությունն Այսրկովկասի քրիստոնյաների վրա. «Կարծեմ ոչ ինչ զանխով է, տէ՛ր իմ, ի քոյոյ յաստուածասիրութենէդ յոյժ տրտմութիւն եւ անպակաս ցաւք սրտից մերոց յաղագս Հայոց եւ Վրաց եւ Աղուանից միահամուռ քոյդ հաւատացեալ հաւտից», իսկ նամակի մեկ այլ հատվածում՝ «Քոյոյդ հաւտիդ Հայոց եւ Վրաց եւ Աղուանից»[44]: Համադրելով կայսրության կողմից հայոց հոգևոր և քաղաքական իշխանության առաջնորդներին ընորոշող տիտղոսները՝ Ա. Եղիազարյանը եզրակացնում է. «Ինչպես Սմբատ Ա-ն էր Բյուզանդիայի կողմից դիտվում որպես «բովանդակ Արևելքի գլխավոր», այնպես էլ Հայոց կաթողիկոսն էր դիտարկվում որպես քրիստոնյա Արևելքի հոգևոր առաջնորդ»[45]: Կայսերական եկեղեցապետի նամակում Հայոց կաթողիկոսի՝ Հայոց, Վրաց և Աղվանից միացյալ հոտի հոգևոր առաջնորդ ճանաչվելու փաստը բացահայտում է նշյալ ժողովուրդների միջև այդ ժամանակ դավանական տարբերությունների բացակայության ուշագրավ իրողությունը: Պարզ է դառնում, որ Բագրատունիներին ենթակա քաղկեդոնիկ վրացիներն այդ ժամանակ դավանական առումով կայսրության հետ շատ կապված չէին[46]:

Նամակում պատրիարքը ակնառու հարգալից և մեծարական վերաբերմունք է ցուցաբերում Հայոց կաթողիկոսի նկատմամբ՝ ասելով, որ Վրաց ու Աբխազաց թագավորներին հորդորել է «լսել խրատուդ ձերոյ (Հովհաննես Դրասխանակերտցու– Վ. Ա.)»: Այս փաստը թույլ է տալիս հասկանալ բյուզանդական իշխանությունների պատկերացումները հայոց հոգևոր առաջնորդի հնարավորությունների մասին, քանզի արաբների դեմ համակովկասյան դաշնակցության ձևավորման գործում Հայոց կաթողիկոսին վերապահում էին համակարգողի դեր: Ցնցումների և հուզումների ժամանակաշրջանում, ինչպես նկատում է Մաքսուդյանը, չնորհիվ իր բարձր եկեղեցական դիրքի, Հովհաննես Դրասխանակերտցին դառնում է միջազգային մասշտաբի կարևոր քաղաքական կերպար, որի իրավասությունը տարածվում էր ոչ միայն Հայոց, այլև Աղվանքի ու Վրաստանի թագավորների հպատակների վրա[47]:

Ստանալով պատրիարքի նամակը՝ Դրասխանակերտցին առանց հապաղելու ձեռնամուխ է լինում նրա հանձնարարականների կատարմանը: Առաջին հերթին հանդիպում է մեծ փորձառություն և հեղինակություն վայելող Վրաց թագավոր Ատներսեհին, համոզում նրան կազմել ու գլխավորել «ընդ իշխանս եւ ընդ տեարս աշխարհիս Հայոց եւ Վրաց» դաշնակցությունը: Աբխազաց Գուրգեն թագավորը նույնպես միանում է այս ձեռնարկին: Կաթողիկոսի համար դյուրին չէր վերադառնալ Հայաստան, քանի դեռ Յուսուֆը, ով «կոխեաց

---

[44] Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 522:

[45] Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. 2016, 41:

[46] Այս կապակցությամբ Մ. Օրմանյանը գրում է. «Վրաց կանոնիչն քաղկեդոնականութեան յարիլը՝ ոյժը կորուսած էր Հայ Բագրատունիներուն այն կողմերուն իշխանությունը ձեռք անցընելէն ետքը» (Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 1220):

[47] D r a s x a n a k e r t c i. 1987, 1.

զսրբութիւնս Տեառն զեռեւս արձանացեալ նստէր ի մայրաքաղաքն Դվին. եւ մոմռեալ անհնարին դառնութեամբ, շրջէր, խնդրէր, հայցէր, թէ զո՞ կանիցէ»[48]: Սակայն զանց առնելով նորից բանտարկվելու իրական սպառնալիքը և զարհուրելի բանտային հիշողությունները՝ կաթողիկոսը վերադառնում է Հայաստան: Կաթողիկոսի խնդիրն էր՝ տեղում հանդիպել հայ նախարարներին և ձևավորել միասնական պայքարի ճակատ: Նա հանդրվանում է համեմատաբար ապահով Տարոն գավառում և հյուրընկալվում իր բարեկամ «զմեծ եւ զխոհեմ եւ զհանճարեղ իշխանն Հայոց» Գրիգորին[49]: Երկրի ներքաղաքական անկայունության պատճառով թեև Տարոնում թուլացել էր Բագրատունյաց կենտրոնական իշխանության ազդեցությունը, սակայն Հայոց եկեղեցու և հովվապետի հոգևոր իշխանությունն ամբողջությամբ պահպանվում էր թե՛ տեղի իշխանների և թե՛ ժողովրդի մեջ: Այստեղ մոտիկից շոշափելով հայ հասարակության տարբեր շերտերի տրամադրությունները՝ կաթողիկոսը համոզվում է, որ տևական ժամանակ ավատատեր իշխանների մասնավոր շահերից ձևավորված հակասությունների բարդ հանգույցը լուծելը դյուրին գործ չէ: Դա առավել դժվարանում էր, որովհետև Յուսուֆը հայ նախարարների նոր «որս» էր սկսել: Նրա գլխավոր թիրախը Գագիկ Վասպուրականցին էր, ով վերցնում է «ընտանեաց իւրայոցն եւ զկապուտն գանձարանաց, այլ եւ համագունդ իսկ զամենայն աշխարհակոյտ խառնիճաղանճս տէրութեան իւրոյ»[50] հեռանում ու պատսպարվում է Մոկքի և Կորդուքի անառիկ լեռներում, որտեղից պաշտպանական կռիվներ է վարում թշնամու դեմ: Նրա եղբայր Գուրգենն ու փեսա Սմբատ Սյունին, ովքեր Սմբատ արքայի նահատակությունից հետո ապաստան էին գտել Գագիկի մոտ, օգնում էին նրան: Շապուհի որդի Աշոտ սպարապետը՝ Աշոտ Բ-ի հորեղբորորդին, անցել էր Յուսուֆի կողմը և գտնվում էր նրա վերահսկողության տակ: Աշոտ Շապուհյանի վիճակը չափազանց բարդ էր. մի կողմից չէր ցանկանում խախտել բարեկամությունն ամիրայի հետ, իսկ մյուս կողմից՝ վնասել իր երկիրը[51]: Ինչ վերաբերում է Աշոտ արքային, ապա նա մնում էր հաստատակամ և բոլորին հիացնում էր իր արիությամբ, սխրանքներով՝ ուղղված «ոչ միայն ընդ սառակինոսացն այլ եւ ընդ Վրաց եւ ընդ Գուգարաց, որք ապիրատս զնմանէ խորհէին»[52]: Վերլուծելով իշխանական հարաբերությունների բարդ խճանկարը՝ կաթողիկոսը Տարոնում համոզվում է, որ փրկության լավագույն տարբերակը քրիստոնեական մեծ պետության հովանավորության տակ անցնելն է, և «միայն կայսեր յանձն արար զելս հնարից խաղաղուեն»[53]: Այդ նպատակով Տարոնի Գրիգոր իշխանի

[48] Դրասխանակերտցի. 2010, 524:
[49] Դրասխանակերտցի. 2010, 501:
[50] Դրասխանակերտցի. 2010, 524:
[51] Ադոնց. 2012, 196:
[52] Դրասխանակերտցի. 2010, 525:
[53] Չամչյան. 1984, 778: Դրասխանակերտցին Տարոնը դիտում էր մի կամուրջ, դիվանագիտական առաքելության նշանակետ՝ կայսրության հետ ավելի սերտ հաղորդակցվելու գործում, քանի որ այս ժամանակաշրջանում Հայաստանի ոչ մի շրջան այնպես կապված չէր Բյուզանդիայի հետ, ինչպես Տարոնը (Գրիգորյան. 1983, 136):

խորհրդով[54] Դրասխանակերտցին 914 թ. նամակ է գրում Բյուզանդիայի Կոստանդին Է Ծիրանածին կայսրին (913–959)[55]: Այն պատմաբանի գրչին հատուկ պերճախոս ոճով շարադրված փաստաթուղթ է՝ ուղարկված «ի Յովհաննիսէ Հայոց Մեծաց նուաստ կաթողիկոսէ»: Լեոյի ընորոշմամբ՝ «սկզբից մինչև վերջ քաղաքական մի գրություն է»[56], որտեղ հեղինակը դիվանագիտորեն խուսափում է կրոնական հարցերի արծարծումից՝ «զգուշանալով, որ դաւանական միութեան խնդիր մէջտեղ չելլէ»[57]:

Նամակը սկսվում է Բյուզանդիայի կայսերն ուղղված մեծարանքի երկարաշունչ ողջունագրով. «Գերաբուն եւ ինքնակալ կայսր Հռովմայեցւոց, աւգուստոս Կոստանդիանոս յԱստուածուստ պսակեալ եւ պերճացեալ, մեծ եւ բարեհաղթ թագաւորք տիեզերաց, աստուածասէրք եւ բարեպաշտք»: Կաթողիկոսը արժևորում է իր եկեղեցու դերը, որը թեև ծանր վիճակում է «եւ ի թշնամեաց աստի գերեալ եւ իբրեւ զանապատ անջրդի խաւանացեալ ըստ նմանութեան մաւր յանգաւակացաւ յորդւոց», սակայն ամուր է ու հավատարիմ իր առաքելությանը[58]: Գեղեցիկ առաջաբանից հետո նամակագիրը խնդրողի և գանգատվողի վայելուչ, արժանապատվություն արտահայտող ոճով նկարագրում է երկրի ողբերգական վիճակը, որը դարձել է անհավատների ավերիչ ասպատակությունների ու անմիաբան, փառասեր իշխանների գժտությունների թատերաբեմ: Հիշեցնում է, որ նախկինում, երբ հայերն ապրում էին «ի հովանի թեւոց ինքնակալացդ», ապահով էին «որպէս ի վայելուչ քաղաքի»: Հայերի զրկանք-տառապանքների նկարագրության համատեքստում կաթողիկոսը, որպես քրիստոնեական առաքինություններին անմնացորդ հավատարմության խորհրդանիշ, հիշատակում է նահատակ Սմբատ Ա Բագրատունի արքային՝ «բոլորից արեւելեայցս զլխաւորի, որ հոգեւորապէս արժանացաւ անուանիլ ի ձենջ որդի ձեզ՝ ծառայն ձեր, զի առ բարեգործն այն եւ խնամակալն եկեղեցւոյ եւս չարահատոյց քան առ ամենեսեան գտաւ չար թշնամին: Վասն զի ըստ մեղաց մերոց մատնեցաւ խնամածուն այն հաւտին Քրիստոսի ի մետաղս անզգամին եւ ամբարշտի, եւ վտանգեալ տագնապեալ չարաչար չարչարանաւք զնա, որ ի ծերութիւն պարարտութեան հոգեւոր խաղաղացուցեալ էր զԱքանազեան ազգս»[59]: Կայսեր քրիստոնեական գութը շարժելու համար

---

[54] *Ադոնց. 2012, 197: Այդ մասին վկայություններ կան Կոստանդին Ծիրանածնի «Կայսրության կառավարման մասին» երկասիրության «Տարոն երկրի մասին» գլխում (Կոստանդին Ծիրանածին. 1970, 4–5):*

[55] *Մ. Զամչյանի կարծիքով՝ նամակը գրվել է 920 թ. նոյեմբերին (Զամչյան. 1984, 778):*

[56] *Լեո. 1967, 554:*

[57] *Օրմանեան. 2001, 1222: Պատմիչի նամակը Մ. Զամչյանը դիտել է որպես նրա քաղկեդոնական տրամադրությունների արտահայտություն (Զամչյան. 1984, 778–781): Ֆրանսիացի արևելագետ Էժեն Բորեի գնահատականով՝ Դրասխանակերտցին պատճառ է եղել «հերձվածողության մեջ հայերի թաղված մնալուն»: «Հերձվածողություն» հասկացության տակ նա նկատի ունի հակաքաղկեդոնականությունը, հետևաբար, Դրասխանակերտցուն «մեղադրում է» հակաքաղկեդոնականության մեջ (Բախչինյան. 1976, 125–126, ծանոթ. 10):*

[58] *Դրասխանակերտցի. 2010, 525:*

[59] *Դրասխանակերտցի. 2010, 528:*

ներկայացնում է եկեղեցու անմխիթար վիճակը, որը «խոպանացեալ եղեւ եւ իբր այրութեամբ իմն անխնամ եւ անհոգացող մնացեալ եւ լռեալ ի տանից տարեկանաց», իսկ հավատացյալ հոտը՝ «զրկեալք ի հայրենի աւժանդակեն եւ ի սեպհական վերակացուէն»: Նկարագրում է արաբական գերության և հետգերության շրջանի իր ոդիսականն ու խնդրում կայսրին. «Փրկեսջիք զվիճակ ժառանգութեան ձերոյ», իսկ Հայաստանից արաբներին հալածելուց հետո՝ «նուաճեսջիք զկողմանս զայսոսիկ զոր ստացայք ի սկզբանէ ի ձեռն քաղցր աւրինաց ձերոց»[60]:

Կայսրության նկատմամբ ցուցաբերած համակրական զգացումներում կաթողիկոսն անկեղծանում է՝ ասելով, որ իր վաղեմի երազանքն է եղել կայսրին հանդիպել գահանիստ քաղաքում, սակայն տարբեր պատճառներով շարունակաբար հետաձգվել է: Նա չի թաքցնում, որ ցանկանում է հաստատվել ու գործել կայսերական իշխանության հովանավորության ներքո: Պատրաստակամություն է հայտնում կաթողիկոսի նստավայրը տեղափոխել Բյուզանդական իշխանության տարածք, որովհետև հայոց հայրապետերը «ի սկզբան հաւատոյս ի հովանի թեւոց ի նախնեաց ձերոց ունէին զբնակութիւնս»: Նա վստահ է, որ հավատացյալ հոտը կհետևի իր օրինակին, և շատերը կտեղափոխվեն Բյուզանդիայի սահմաններ, իսկ «որք ոչ գայցէն եւ արտաքս ի գաւթէ հաւտի Տեառն ելանիցեն, այնպիսիքն կրեսցեն դատաստանս ի մէնջ ո ոք եւ իցէ»: Նա պարզապես հուշում է, որ արաբներին վտարելու գնով Հայաստանը պատրաստ է ընդունել Բյուզանդիայի գերիշխանությունը. «Յիսմայելականաց աստի արտաքս զերծեալ եւ ի հովանի թեւոց ձերոց ամրացեալ եւ առկայացեալ, արածեսցուք որ ի մեզ հաւտս է Աստուծոյ: Եւ աւգնականութեամբ ձերով մածաւ եւ փառաւք եւ շնորհաւք պատրաստեսցուք զՀայաստանեայս ժողովուրդ, կազմեալ նախ Տեառն եւ ապա ձեզ կամաւքն Աստուծոյ»[61]: Նամակը փակվում է կայսրին փառաբանող մեծաշուք մակդիրներով: Հավանաբար, հեղինակը կայսեր սիրտը շահելու և նրա քրիստոնեական զգացմունքները գործի վերածելու թաքուն հույսեր էր փայփայում: Խնդրո առարկա նամակը, ինչպես ասվեց, գրվել է 914 թ., որից ոչ շատ ժամանակ անց Աշոտ Բ-ն մեկնել է Կոստանդնուպոլիս և թագադրվել Կոստանդին Ծիրանածին կայսեր արքունիքում:

Կաթողիկոսի նամակում արտահայտված էին քրիստոնյա կայսրությանը նվիրված հոգևոր առաջնորդի գաղափարները: Երկրի աշխարհիկ տերերը՝ նախարարները, անկասկած, չէին կիսում նրա տեսակետները. նրանք նույնպես համակրում էին կայսրությանը և պատրաստ էին կաթողիկոսի հետ պայքարել ընդհանուր նպատակի համար, սակայն չէին ցանկանում վտանգել իրենց անկախությունը՝ ենթարկվելով կայսրությանը[62]:

Հայաստանի համար բախտորոշ այս շրջանում հայ-բյուզանդական նամակագրությունը վերոհիշյալ գրություններով չի սահմանափակվում: Մեզ է

---

[60] *Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 530:*

[61] *Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 531:*

[62] *Ա դ ո ն ց. 2012, 198: Խնդրո առարկա նամակը գնահատելով «միջնադարյան հայ դիվանագիտության և նրբամտության մի արտահայտություն»՝ Առաքել Առաքելյանը գտնում է, որ Դրասխանակերտցու քայլը խիզախ էր, բայց՝ ոչ ճիշտ (Ա ռ ա ք ե լ յ ա ն. 1959, 460):*

հասել Դրասխանակերտցու և Սմբատ Ա թագավորի հետ Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի վարած թղթակցության ևս երկու կարևոր նմուշ՝ 101-րդ և 139-րդ թղթերը: Բարեբախտաբար, պահպանվել են այդ նամակների հունարեն բնագրերը, որոնք թարգմանել և քննել է անվանի հայագետ Հրաչ Բարթիկյանը:

101-րդ թվակիր նամակի հասցեատերը Հայոց կաթողիկոս Հովհ. Դրասխանակերտցին է: Այն գրվել է 915 թ.՝ Աշոտ Բ-ի՝ Կոստանդնուպոլսից բյուզանդական զորքով վերադառնալուց անմիջապես հետո[63]: Ոչ ծավալուն այս նամակում պատրիարքը հորդորում է Հայոց կաթողիկոսին երախտագիտությամբ գնահատել «աստվածապսակյալ կայսեր բարեգործությունը», և ծառայություններ մատուցելու եղանակով ապացուցել այդ վերաբերմունքին արժանի լինելը[64]: Կայսերական եկեղեցու պետը նամակի հետ նաև պատմուճան է ուղարկում Հայոց կաթողիկոսին: Նամակից երևում է, որ Աշոտ Բ-ն դիմել է Բյուզանդիային՝ իրեն հայոց թագավոր ճանաչելու խնդրանքով, իսկ կայսրությունը հավանություն է տվել նրա խնդրանքին: «Մեծ և աստվածապսակյալ կայսրը,– գրում է Կոստանդնուպոլսի պատրիարքը Հայոց կաթողիկոսին,– ձեր խնդիրքին ուշի ուշով ունկնդիր լինելով, ընդառաջ գնաց և հաստատումն ու պատիվը, որ մեծ ցանկություն ունեցավ ստանալու նա, ում վստահված է ձեր իշխանությունը, տվեց»[65]: Այստեղ ակնարկվում է Աշոտ Բ-ի գահ բարձրանալը և ճանաչվելը բյուզանդական արքունիքի կողմից: Նաև ենթադրվում է, որ Աշոտ Բ-ն Բյուզանդիային դիմել է արաբների դեմ ազատագրական պայքարում օգնելու խնդրանքով:

139-րդ նամակն ուղղված է հայոց «իշխանաց իշխանին», որի տակ հասկացվում է Հայոց թագավորը: Նամակի սկզբում հույն պատրիարքը երկաբնակությունը համարում է «ավելի լավ» դավանանք, իսկ հայոց միաբնակությունը քողարկված անվանում է «հին չարափառություն»: Հակիրճ գաղափարական գրոհից հետո խոսվում է կյանքից նոր հեռացած կաթողիկոսի փոխարեն ապագա կաթողիկոսի ձեռնադրությունը Կոստանդնուպոլսի եկեղեցում կատարելու՝ Հայոց թագավորի խնդրանքի մասին: Սրան ի պատասխան՝ պատրիարքը գրում է. «Քեզ մնում է այստեղ ուղարկես Աստուծո համաձայնությամբ (առաջադրվելիք) ձեր ապագա քահանայապետին, որպեսզի (նա) ստանա բարեպաշտության առավել ճշգրիտ դավանանքը, լինելով մեզ հետ ինչքան ժամանակ որ նա ցանկանա, ծանոթանա բարեպաշտության հարցերին և եկեղեցական իրավիճակին, որից հետո, արժանանալով ձեռնադրության, վերադառնա ձեր պայծառափայլ ազնվությանը, ձեր իշխանության լիության»[66]: Ենթադրելի է, որ նոր մահացած կաթողիկոսը պետք է լինի Հովհ. Դրասխանակերտցին: Սակայն վերջինս կյանքին հրաժեշտ է տվել քիչ ավելի ուշ, քան

---

[63] *Բ ա ր թ ի կ յ ա ն. 1966, 252: Ա. Եղիազարյանը գտնում է, որ նամակը գրվել է Աշոտ Բ-ի Կոստանդնուպոլսում եղած ժամանակ (Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. 2016, 43):*

[64] *Բ ա ր թ ի կ յ ա ն. 1966, 255:*

[65] *Բ ա ր թ ի կ յ ա ն. 1966, 252:*

[66] *Բ ա ր թ ի կ յ ա ն. 1966, 256: Նամակում հիշատակվում է Կոստանդնուպոլսի նշանավոր պատրիարք Փոտը (858–867), (877–886), որը հայ-բյուզանդական եկեղեցական միություն ստեղծելու համար մեծ ջանքեր է գործադրել, սակայն էական հաջողության չի հասել:*

հույն պատրիարք Միստիկոսը. հետևաբար, վերջինս չէր կարող խոսել Դրասխանակերտցու մահվան մասին:

Նամակի բովանդակությունից երևում է, որ Հայաստանը դժվարին դրության մեջ է: Այլապես Հայոց արքան երբեք չէր համաձայնի, թեկուզ առերես, որ Հայոց կաթողիկոսն օծվի Կոստանդնուպոլսում երկաբնակ պատրիարքի ձեռքով: Հայաստանի վրա գերիշխանություն հաստատելու հույսեր Բյուզանդիային ներշնչել էին և՛ Հայոց թագավորը, և՛ Հայոց կաթողիկոսը, ով վերոնշյալ իր նամակում մի քանի անգամ ակնարկում է Բյուզանդիայի տիրապետությունն ընդունելու ցանկալիությունը: Հայաստանը դժվարին վիճակից դուրս բերելու և օգնության ակնկալիքով Սմբատ Ա-ն ու կաթողիկոսը, իհարկե, ստիպված էին այդպես դիմել կայսրությանը: Ամենայն հավանականությամբ, նման նամակ գրել է նաև Հայոց Սմբատ Ա արքան 909–910 թվականներին, երբ Յուսուֆ ամիրան կողոպուտի ու ավերի էր մատնել Հայաստանը, իսկ կաթողիկոս Դրասխանակերտցին բանտարկված էր: Կաթողիկոսի հետ բանտ էին նետվել նաև բազմաթիվ հայ նախարարներ ու իշխաններ, որոնք խոշտանգվում և մահապատժի էին ենթարկվում: Այդպիսի պայմաններում, ըստ երևույթին, Սմբատ արքան հույսը կտրել էր, որ կաթողիկոսը կարող է արաբների ձեռքից ազատվել: «Հովհաննես Դրասխանակերտցու երկարատև բացակայությունը,– գրում է Հ. Բարթիկյանը,– հավանաբար հարց է բարձրացրել նոր կաթողիկոսի ընտրության մասին: Գուցե վերջին հանգամանքը Սմբատ թագավորը ցանկացել է օգտագործել Բյուզանդիայից որևէ օգնություն ստանալու համար, ձևականորեն առաջարկելով Բյուզանդիային, որ նոր կաթողիկոսն օծվի Կոստանդնուպոլսում»[67]: Հետևաբար, ստացվում է, որ Նիկողայոս Միստիկոսի 139-րդ նամակն ուղարկվել է 912–913 թթ.՝ Հայոց կաթողիկոսի կենդանության օրոք, և ոչ թե Աշոտ Բ-ին, այլ նրա հորը՝ Հայոց արքա Սմբատ Ա-ին:

Կաթողիկոսի հաշտարար միջնորդությունը ներիշխանական պայքարում

Հայոց կաթողիկոսի նամակը, որը նաև դիմում-տեղեկանք էր Հայաստանում տիրող դրության մասին, անհրաժեշտ ազդեցություն և արձագանք է ստանում բյուզանդական արքունիքում: Կայսեր հանձնարարությամբ Հայաստանի և Բյուզանդիայի միջև բարեկամությունն ու դաշինքը վերականգնելու դիվանագիտական առաքելությամբ Հայաստան է ուղարկվում հայերենի լավ գիտակ ոմն Վասիլիկոս Թեոդորոս[68]: Մեծ նվերներով Հայաստան ժամանած պատվիրակը պետք է հանդիպեր Աշոտ Բ-ին ու Հովհաննես կաթողիկոսին և նրանց հրավիրեր Կոստանդնուպոլիս: Պատմիչի խոսքով՝ իրենք պետք է շտապեին «երթալ ի միասին, տեսանել եւ տնաւրինել զհասարակացն աւգուտս»[69]: Քանի որ Աշոտ Երկաթը գտնվում էր Հայաստանի հյուսիսարևելյան շրջաններում, իսկ Հովհաննես կաթողիկոսը՝ Տարոնում, կայսեր բանագնացն առաջինը հանդիպում է կաթողիկոսին, այնուհետև՝ Աշոտ Երկաթին: Վերջինս,

[67] *Բ ա ր թ ի կ յ ա ն. 1966, 254:*
[68] В а с и л ь е в. 1902, 216.
[69] *Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 533:*

առանց ժամանակ կորցնելու, ուղևորվում է Կոստանդնուպոլիս և այնտեղ արժանանում մեծ պատիվների[70]: Մինչդեռ կաթողիկոսը, հասնելով Դերջան, փոխում է որոշումը և, հակառակ կայսեր բազմակի հրավերներին, հրաժարվում Կոստանդնուպոլիս մեկնելուց: Նա կասկածներ ուներ, որ այնտեղ իր առջև կդրվեն դավանանքային խնդիրներին վերաբերող պահանջներ, ինչը կարող էր գայթակղել քաղկեդոնականության մեջ իրեն մեղադրել ցանկացող տկարամիտներին: «Նա զգում էր իր ձեռնարկած քաղաքական գործի անհրաժեշտությունը,– գրում է Լեոն,– բայց նրա ոտներին փաթաթվել էր Քրիստոսի բնության չարաղետ հարցը»[71]: Հովհաննես Պատմաբանը, ով բյուզանդական կայսրին ուղղված նամակում հավաստիացնում էր, թե նրան հանդիպելը տարիների իր երազանքն է և նույնիսկ պատրաստակամ էր իր հոտը դնել նրա տիրապետության տակ, կայսրության ներկայացուցիչների հետ շփումներ ունենալուց հետո հրաժարվում է այցելել մայրաքաղաք: Նրա վարքագծից երևում է, որ քաղկեդոնականությանը մերձենալու և Հայաստանը Բյուզանդական կայսրությանը ենթարկելու մասին հաղորդած մտքերը պարզապես դիվանագիտական հնարք էին[72]: Այնուամենայնիվ, նա «ամսաւրեայ աւուրս» մնում է Դերջանում, ապա՝ անցնում Եկեղյաց գավառ: Շրջագայելով Գրիգոր Լուսավորչի կյանքով և մահվամբ նվիրագործված սրբավայրերում՝ ապացուցում է իր նվիրվածությունը Հայոց եկեղեցու դավանությանը[73]: Կաթողիկոսն այցելում է Սեպուհ լեռան ճգնավորներին՝ Մանյա այր, աղբյուրն ու այգին, կտրում է Սբ. Գրիգորի տնկած ծառի մի ճյուղը և օրհնության հող վերցնում փլուզված բլրակից, որտեղ իր հրամանով «չինեալ էր եկեղեցի նախ քան զայս ..., ի մահարձանաց ինչ կրով ձուլածոյ»: «Ամիսս իբրեւ ինն» կաթողիկոսն ապրում և շրջագայում է Եկեղյաց գավառի վանքերում՝ սպասելով Աշոտի վերադարձին: «Ավելի քան հավանական է, որ կաթողիկոսը հրաժարվել է կայսերն այցելելու իր մտադրությունից այդ վանքերի վանականների ազդեցությամբ»[74],– եզրակացնում է Ն. Ադոնցը: Հովհաննես կաթողիկոսը Դերջան և Եկեղյաց գավառներ էր գնացել այն ժամանակ, երբ Աշոտ Երկաթը մեկնել էր Կոստանդնուպոլիս: Կաթողիկոսի՝ այդ գավառներում անցկացրած տասնամյակը համապատասխանում է այն տեղությանը, որն անցկացրել է Աշոտ Երկաթը Կոստանդնուպոլսում: Ելակետ ընդունելով հույն պատմիչ Թեոփանեսի Շարունակողի վկայությունը՝ կարելի է եզրակացնել, որ Աշոտ Երկաթի

---

[70] *Ասողիկը և Ստ. Օրբելյանն Աշոտ երկաթի այցը Կոստանդնուպոլիս ներկայացնում են որպես փախուստ (Ա ս ո ղ ի կ. 2010, 748, Ս տ ե փ ա ն ն ո ս ի Ս ի ւ ն ե ա ց ե պ ի ս կ ո պ ո ս ի. 1861, 140):*

[71] *Լ ե ո. 1967, 555:*

[72] *Հ ա յ ո ց պ ա տ մ ո ւ թ յ ո ւ ն. 2014, 42:*

[73] *Բ ա խ չ ի ն յ ա ն. 1973, 44:*

[74] *Ա դ ո ն ց. 2012, 199: Գնել Գրիգորյանը կարծում է, որ կաթողիկոսի՝ Բյուզանդիա մեկնելուց հրաժարվելը կարելի է վերագրել Տարոնի Գրիգոր իշխանին (Գ ր ի գ ո ր յ ա ն. 1983, 136, ծանոթ. 93): Վ. Վարդանյանի կարծիքով՝ Բյուզանդիա չմեկնելու կաթողիկոսի որոշումն ընդունվել է Աշոտ Շապուհյանի և Գագիկ Արծրունու ազդեցությամբ, քանի որ այդ ուղևորությունն ավելի կմտերմացներ կաթողիկոսին իրենց հակառակորդ Աշոտ Երկաթի հետ (Վ ա ր դ ա ն յ ա ն. 1988, 123):*

այցը Կոստանդնուպոլիս տեղի է ունեցել 915 թվականին[75]: Այս հարցում կարևոր նշանակություն ունեն նաև Դրասխանակերտցուն հղած Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի իրարահաջորդ նամակները, որոնք թվագրվում են 915 թվականով[76]: Այստեղ կարևոր է նաև մատենագրի այն տեղեկությունը, որ Հայաստանում Յուսուֆի՝ հարձակումներով սկսված «անողորմ պատերազմացն» ժամանակաշրջանը տևում է «յեթեան ամ»: Քանի որ Յուսուֆի հարձակումները սկսվել են 909 թ., հետևաբար, դրանց ավարտը համապատասխանում է 915–916 թթ.[77]: Հիմք ընդունելով վերոնշյալ ժամանակագրական տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ Դրասխանակերտցին Դերջանում և Եկեղյաց գավառում անցկացրել է տասն ամիս՝ 915–916 թթ.:

Նախքան Կոստանդնուպոլսից Աշոտ Բ-ի վերառանալը կաթողիկոսը մեկնում է Այրարատ, քանի որ երկրում դրությունը դեռևս շարունակում էր մնալ լարված, նույնիսկ նա խոստովանում է՝ կցանկանար «տարաբնակ լինել ի բնակութենէ աստի, եւ առ նոյն սուրբ այրի (Սեպուհ լեռան Մայա այրք քարայր– Վ. Ա.) բնակիլ»[78]: Իր ժառանգական իշխանությանը տիրելու համար Աշոտ Երկաթը 916 թ. կայսեր նվիրած թանկարժեք գանձերով և «բազում զաւրավարս եւ զաւրս Հռովմայեցիս ... եկեալ հասեալ յաշխարհ իւր»: Նա արդեն տեղյակ էր Հայաստանում տիրող դժվարին դրության և Յուսուֆի գործած մեքենայությունների մասին: Նորընծա արքան հարկադրված էր պայքարել թե՛ ներքին, թե՛ արտաքին ուժերի դեմ: Երկրում երկպառակությունները խորացնելու և Բագրատունի արքայազուններին իրար հակադրելու համար 916 թ. Յուսուֆը «նանրական մտաւք թագ կապեալ սպարապետին Հայոց (Աշոտ Շապուհյանին – Վ. Ա.) եւ սուսեր ընդ մէջ ածեալ» ուղարկում է Հայաստան[79]: Բյուզանդիայից վերադարձած արքայի դեմ ընդվզում է «մեծ դաստակերտն Կողբ», որը պատկանում էր Աշոտ սպարապետին: Ուստի և Աշոտ Բ-ն իրեն ուղեկցող բյուզանդական զորքով այն ավերում ու «ի գերութիւն յունականացն զնոսա մատնէր»[80]: Աշոտ Շապուհյանը, տեսնելով, որ «սիրելի դաստակերտն իւր վանեալ վարատեալ եւ գերեալ յարքայորդւոյն Աշոտոյ եւ ի Հռովմայական զաւրացն, եւ զայլս եւս զգերդաստանս նորա եւ զգեաւղս յաւարի առեալ», պատրաստվում է պատերազմել Աշոտ Երկաթի դեմ: Նրանք իրար դեմ դուրս են գալիս «իբրեւ զաւտարածին թշնամիս ընդ միմեանս ի գրգռութիւն մարտից մարտուցեալ»[81]: Սպասվում էին եղբայրասպան կռիվներ անկանխատեսելի հետևանքներով, սակայն կաթողիկոսին հաջողվում է կան-

---

[75] *Թեոփանեսի շարունակող. 1990, 228, 368, ծանոթ. 114:*

[76] *Բարթիկյան. 1966, 252, Եղիազարյան. 2016, 42–43:*

[77] *Ադոնց. 2012, 201, Եղիազարյան. 2016, 42–46:*

[78] *Դրասխանակերտցի. 2010, 535:*

[79] *Դրասխանակերտցի. 2010, 538: Ըստ սկզբնաղբյուրի՝ Աշոտ Շապուհյանը «թագավորել» է 18 տարի. «զԱշոտ, որդի Շապուհոյ, եղբօր Սմբատայ, կացուցանէ (Յուսուֆը) ի տեղւոջ Սմբատայ, որ թագաւորեաց Հայոց ամս ԺԸ (18)» (Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ. 1956, 501):*

[80] *Աշոտ Բ-ն բյուզանդական զորքով Դվին չի մտել: Բյուզանդական զորքը Կողբի շրջակայքը ավարառելով և գերիներ վերցնելով, ետ է վերադարձել (Դանիելյան. 1977, 76):*

[81] *Դրասխանակերտցի. 2010, 538:*

խել արյունալի բախումները: Բագրատունի ժառանգների միջև ծագած վեճը նրա միջամտությամբ հարթվում է և համաձայնություն ձեռք բերվում: «Իսկ իմ ապա ըստ դիպաց ինչ ի ժամ դիպաւղ,– պատմում է իր միջնորդության արդյունքներից գոհ կաթողիկոսը,– ժամանեալ, եկեալ, հասեալ ի հեռաստանէ հալածանացն եւ տարուբերեալ եւ համոզեալ ի մէջ նոցա՝ զվայելուչ եղբայրական լծակցութիւն պատրաստել ի մէջ նոցա ջանահնար լինէի: Ըստ որում ապա յունկնդրութիւն ինձ եկեալք երկաքանչիւրքն եւ հաւանական միտս ստացեալ, ի պայման միաբանական եւ խաղաղաւետ սիրոյ հաստատեցի նոցա»[82]*: Հիշյալ դեպքերից հետո Աշոտ Բ-ն հաստատվում է Վաղարշապատում, իսկ սպարապետը՝ Դվինում: Սակայն Աշոտ Շապուհյանի հավատարմությունը երկար չի տևում: Աշոտ Բ-ն լսում է, որ հորեղբոր որդին հավատարիմ չի մնացել «սահմանեալ ուխտին» և հափշտակել է Վաղարշապատի շուրջ գտնվող մի քանի կալվածներ, որոնք պատկանում էին իրեն: Արքան հանկարծակի հարձակվում է Աշոտ Շապուհյանի վրա, որն այդ ժամանակ ոչինչ չկասկածելով՝ գտնվում էր «ի գիւղն որ Վաղաւերն անուանի»: Աշոտ Բ-ն սաստիկ ջարդ է տալիս և փախուստի մատնում սպարապետի զորքին՝ ետ խլելով «զամենայն կապուտ կողոպուտ նոցա եւ զգէնս եւ զզարդս եւ զձիս եւ զկորիս բազում յոյժ»: Կաթողիկոսը ցավով խոստովանում է, որ այս անգամ նրանց հաշտեցնելու իր ջանքերն արդյունք չեն տալիս. «Իսկ ես ապա ժամանեալ անդ՝ ի մէջ նոցա, ոչ սակաւ ինչ բանս յանդիմանութեան եւ լուտացաւղ ապառում խոսովութիւն ի վերայ արքայորդւոյն ածէի արտաւարեալ տոչորմամբ՝ սակս այնպիսի մահահոտ դրժողութեանցն զոր արար: Եւ թէպէտ բողոք բարձեալ ջանահնար լինէի բառնալ ի միջոյ նոցա զչար սերմանացանի որոմնն, զի մի՛ գտցի ի նոսա խմորք ցաւոց, որ թէեւ առ ժամայն տեղի տուեալ բանին հաւանական անուցանէին կամս ի հաշտութեան սակի, սակայն ո՛չ կացեալ մնացեալ ի բանսն բարեզգեացս, այլ վաղվաղակի ի չար մախանս դարձեալ հակամիտէին, եւ այնպէս տակաւին ընդ միմեանս դատէին կշտամբութեամբ չարի եւ բորբոքեալ նախանձու»*[83]*: Ավատատիրության դարաշրջանին բնորոշ երկպառակչական կռիվները շարունակվում են երկու տարի՝ 917–919 թթ.: Ընդհարումները չէին դադարում, իսկ երկիրը մեծ վնասներ էր կրում. «Առ հասարակ դղրդեալ, սասանեալ, աւերեալ, քանդեալ, կործանեալ լինէր սեպհական տերութիւն աշխարհին իւրեանց. եւ զմեծութիւն եւ զփառս իւրեանց ազգի աւտարի տուեալ, ի փարթամութիւն այլոց եւ յաղքատութիւն ինքեանց տարածեցին զճանապարհս իւրեանց»*[84]*: Աշոտ Երկաթն ամուսնանում է Աղվանից Սահակ Սևադա անունով «քաջ և հռչակված» իշխանի դստեր հետ: Աներոջից օգնական զորք վերցնելով՝ Աշոտը նորից արշավում է հորեղբոր որդու դեմ, վերսկսում պատերազմը: Կաթողիկոսը դարձյալ միջամտում է, փորձում է հաշտեցնել. «Իսկ ես ի խաղաղութիւն միշտ խաւսէի ընդ երկաքանչիւրսն որպէս միանգամ եւ երկիցս եւ երիցս»: Բայց թագավորը չի լսում կաթողիկոսի հորդորները և առաջնորդվում է «ըստ գրգռութեան յուզմանն» իր աներձագ Գրիգոր Սևադայի: Պարտություն կրելով Աշոտ Շապուհյանից՝ արքայորդին*

---

[82] *Դրասխանակերտցի. 2010, 539:*
[83] *Դրասխանակերտցի. 2010, 541:*
[84] *Դրասխանակերտցի. 2010, 541–542:*

օգնություն է ստանում Գուգարաց իշխան Գուրգենից և վերսկսում հարձակումը: Այստեղ էր, որ Հովհաննես կաթողիկոսին հաջողվում է նորից հաշտեցնել արյունակից ախոյաններին, վերջ տալ եղբայրասպան կռիվներին: Ձեռք բերված հաշտությունից բավարարված՝ կաթողիկոսն արձանագրում է. «Եւ յայնմ նուաղի ապա ոչ տուաւ նոցա առ ի յինէն թոյլ մարտիւ ընդ միմեանս հարկանիլ, այլ բաղխեալ իմ զգործարանս իմաստից նոցա, խրատու բարւոյ զունկն մատուցանէին, յաւգտութիւն սիրոյ ընդ միմեանս իմաստութեամբ բերեալք»[85]:

Աշոտ Բ-ն իր աներ Սահակի օգնությամբ ձերբակալում և կուրացնում է իր դեմ ապստամբած Ուտիքի իշխան Մովսեսին: Փոխադարձ անվստահության ու կասկածանքի մթնոլորտում նրա դեմ դավադրություն են պատրաստում Գուգարքի Գուրգեն իշխանը և իր եղբայր Աբասը: Կաթողիկոսը չի մեկնաբանում այս ոճրամիտ նախաձեռնության պատճառները: Լեոն իրավացիորեն պնդում է՝ պատճառն իշխանությանը տիրանալն էր, մանավանդ որ Աշոտ Շապուհյանը կարող էր գործել իր աներ՝ Գուգարաց Գուրգեն իշխանի դրդմամբ[86]: Գեղարքունիքի իշխան Վասակը՝ Աշոտ Բ-ի Մարիամ հորաքրոջ որդին, կասկած ունենալով արքայի կողմից իր կյանքի ապահովության համար, նրան այցելելիս երդման թուղթ է խնդրում: Կաթողիկոսի միջնորդությամբ թագավորը երդման գիր է տալիս՝ երաշխավորելով նրա անվտանգությունը: Սակայն Աշոտ Բ-ին տեղեկություն է հասնում, թե սուրհանդակի մոտ բռնվել է Վասակի գրագրությունն Աշոտ Շապուհյանի հետ: Սա բավական է լինում, որ արքան դրժի իր խոսքն ու կալանավորի Վասակ իշխանին, «կապէ զնա երկաթի կապանաւք եւ դնէ յամրոցի անդ, որ Կայեանն կոչի»: Դրասխանակերտցին հասնում է նաև այստեղ, խիստ հանդիմանություններ է կարդում նրան ուխտադրժության համար. «Իսկ ես թէպէտ եւ սաստկագոյն բան յանդիմանութեան ի վերայ ածեալ թագաւորին, պաշարեցի զնա կշտամբութեամբ մեծաւ վասն ստելոյ ուխտին երդման եւ կապելոյ զՎասակն, եւ ընդ իւրով ձեռամբ զտերութիւն նորայ նուաճելոյ»[87]: Կաթողիկոսի հորդորներով՝ Աշոտը խոստանում է՝ որոշ ժամանակից հետո ազատ արձակել կալանավորին, ինչպես նաև նրա նկատմամբ պատժամիջոցներ չկիրառել:

Շուտով գժտվում են Աշոտ Երկաթը և իր աներ Սահակ Սևադան: Հակառակորդները բանակում են Ախայանք գյուղի մոտ, սակայն, լսելով հայ նախարարների հանդիմանություններն ու հորդորները՝ նրանք «դաշինս հաստատեն խաղաղութեան»: Բազում երդմնագրեր կնքելով՝ «տան իրերաց Քրիստոսադիր կիտիւն եւ միջնորդութեամբ սրբոյ նշանի խաչին»: Սակայն Հայոց արքան կասկածում է, որ Աշոտ Շապուհյանի և Սահակ Սևադայի միջև գոյություն ունի համախոհություն, ուստի հարվածում է Դվինին: Այդ ընթացքում Սահակ Սևադան արշավում է Աշոտ Բ-ի տիրույթների վրա և Կայան բերդին տիրանալով՝ ազատ է արձակում Վասակ Սյունուն: Աշոտ Երկաթը՝ թշնամության պատճառը պարզելու համար, եպիսկոպոսներից մեկին, որպես բանագնաց, ուղարկում է Սահակ Սևադայի մոտ: Վերջինս, անտեսելով եպիս-

---

[85] *Դրասխանակերտցի. 2010, 542–543:*
[86] *Լեո. 1967, 559:*
[87] *Դրասխանակերտցի. 2010, 545:*

կոպոսի առաքելությունը, վերստին պատերազմ է սկսում: Պատմիչի խոսքերով՝ Աշոտ Երկաթը, Սահակ Սևադայի հետ կնքած հաշտության գիրը կապելով իր առջևից տարվող խաչին, հայտարարում է, որ «թող Աստված իրավաստ լինի». եթե ինքն է մեղավոր, թող վնասվի, եթե Սահակ Սևադան՝ թող պատժվի: Աշոտը պարտության է մատնում հակառակորդին, իսկ Սահակ Սևադային և նրա որդի Գրիգորին ձերբակալելով՝ «կուրացուցանէ զաչս երկոցունց նոցա»: Նա գրավում է Գարդմանի բերդն ու այն իր սեփականություն հայտարարում: Կաթողիկոսն Աշոտ Բ-ին մեղադրում է համընդհանուր անվստահության մթնոլորտի ստեղծման մեջ: Նրան դուր չի գալիս, որ Հայոց թագավորն իրեն շահնշահ, այսինքն՝ արքայից արքա է կոչում, իրեն բարձր է դասում երկրի մյուս թագավորներից: Աշոտ Բ-ին հորջորջում է «անվանեալ» կամ «Շահանշահ կոչեցեալ»՝ կամենալով շեշտել, որ այդ տիտղոսով նրան կոչել են ուրիշները, և այն չնորհել է արաբ ամիրա Սբուքը: «Ըստ երևույթին կաթողիկոսը չի ճանաչել շահնշահի նրա իրավունքները, – գրում է Վ. Վարդանյանը, – թերևս նաև չհակադրվելու համար Գագիկ Արծրունու՝ ամենայն հայոց թագավոր դառնալու նկրտումներին»[88]: Եվ, ընդհակառակը, համակրանք է դրսևորում Գագիկ Արծրունու նկատմամբ, որին նախկինում անվանում էր «թագակերպեալ» կամ «թագաւորեցեալ»: Վերջինս Մուքթադիր խալիֆի (908–932) կողմից ճանաչվել էր Հայոց թագավոր, որին ի պատասխան՝ Յուսուֆն արքայական թագ էր ուղարկել Աշոտ Երկաթին:

919 թ.՝ «յետ սակաւ աւուրց» Յուսուֆի բանտարկությունից, Ատրպատականի նոր ոստիկան է նշանակվում Սբուքը: Վերջինս իր իշխանությունն ամրապնդելու համար նույն թվականին Աշոտ Երկաթին չնորհում է Շահնշահի տիտղոս[89]: Այդ կերպ՝ Աբբասյանները ձգտում էին վերջ դնել այն խառնաշփոթ վիճակին, որը քայքայում էր ոչ միայն հայոց թագավորությունը, այլև վնաս էր հասցնում հենց Արաբական խալիֆայությանը: Բյուզանդական կայսրության հետ գտնվելով անցիջում պայքարի մեջ՝ արաբները ստիպված էին կայունություն հաստատել հայոց թագավորությունում և նախապատվությունը տալ օրինավոր գահաժառանգ Աշոտ Բ-ին[90]: Շահնշահ պատվավոր տիտղոսը ստանալուց հետո Աշոտը շարունակում է հաղթանակները և չի դադարեցնում երկրի սահմաններն ընդլայնելու իր պայքարը: «Եւ այնուհետեւ ապա հիւսիսական ազգքն,– հավատացնում է պատմաբան կաթողիկոսը,– այնոքիկ ընդ ձեռամբ նորա նուաճեալ հնազանդէին ի ծառայութիւն, եւ ըստ

---

[88] Վ ա ր դ ա ն յ ա ն. 1988, 121:

[89] Ասողիկի վկայությամբ, երբ Աշոտ Երկաթը Հայաստանը մաքրեց թշնամուց, նա «գտանէ զծառայս հաւր իւրոյ թագաւորեալ. զինքն անուանեաց Շահանշահ, այսինքն թագաւորաց թագաւոր» (Ա ս ո ղ ի կ. 2010, 748): Վարդան վարդապետը հայտնում է, որ «զծառայս»-ը վերաբերում է Աշոտ Երկաթի հորեղբորորդի Աշոտին, Գագիկ Արծրունուն և Ատրներսեհ Բագրատունուն: Աշոտը «կոչեցաւ ի վերայ նոցա Շահանշահ» (Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 87):

[90] Այս շրջանում Հայաստանի առաջնորդությանը հավակնում էին երեք «Հայոց թագավոր»-ներ՝ Աշոտ Երկաթը, Գագիկ Արծրունին և Աշոտ Շապուհյանը (Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. 2016, 48, 50):

աջողակ այցելութեանն Աստուծոյ երթալով երթայր եւ զաւրանայր»[91]: Դվինից ոչ հեռու գտնվող Կոտայք գավառից շահնշահը հրովարտակ է ուղարկում Աշոտ Շապուհյանին՝ խաղաղության և հաշտության առաջարկով: Շահնշահը հատուկ գրությամբ կաթողիկոսին ուղարկում է Շապուհյանի մոտ՝ նախապատրաստելու «ի մէջ նոցա զքաջավայելուչ խաղաղութեանն պայման»: Շնորհիվ՝ իր հեղինակության Հովհաննես կաթողիկոսը համոզում է նրան միասին գնալ շահնշահի մոտ: «Եւ անդ ապա իմով թելադրութեամբ եւ բանի խրատու,– գոհունակությամբ արձանագրում է կաթողիկոսը,– որ դիմեալ ի լսելիս լսողացն հանգչիւր, զպաշարումն մառախլապատ, միգապատ ափշութեան մտաց չարին յանձանց ի բաց մերկացեալ, ամենայն իրաւք յարակցէին յինքեանս զկատարեալ խաղաղութեանն դաշինս առհաւատչեայ երդմամբ զնոյն հաստատել»[92]: Հակաթոռ թագավորների հակամարտությունն ավարտվում է բարեկամության հաստատումով, որի առթիվ Դվինում տեղի են ունենում «խնճոյս ցնծութեան»:

Դվինն այդ ժամանակ դարձել էր Հայոց թագավորությանը ենթակա, և թագավորը հնազանդեցնում է քաղաքում իշխող դիրք ունեցող իսլամ հոգևորականներին: Վերջիններս բռնագրավել էին հայրապետանոցի ինչքն ու կալվածները, որոնց համար պայքարում էր Հայոց կաթողիկոսը[93]:

Ներքին ընդդիմության դեմ Աշոտ շահնշահի պայքարի վերջին դրվագը Ցլիկ Ամրամի հետ բախումներն էին, որից հետո նա այլևս հաղթանակներ չի տանում: Կաթողիկոսն առիթը բաց չի թողնում մեղադրելու Աշոտ երկաթին՝ ասելով, որ դրա պատճառը նրա փոխված բնավորությունն է. «Թուի ինձ եթէ զողջխոհութիւնն զայն, զոր նախն էր ստացեալ, յանմաքուր բղջախոհութիւն փոխարկեալ եւ զքաղցրութիւն պաշտամանն Աստուծոյ յանձնէ ի բաց վարատեալ»[94]: Քաղաքական իմաստնությամբ օժտված կաթողիկոսը հասկանում էր, որ ջանքերը պետք է ուղղված լինեն իշխանների միասնության ամրապնդմանը և ոչ թե նրանց կործանմանը, քանի որ դարեր շարունակ Հայաստանի քաղաքական ու հասարակական կյանքի հիմքը կազմող ավատատիրական վարչակարգն այնքան խոր արմատներ ուներ, որ դրա դեմ ցանկացած ոտնձգություն ի սկզբանե դատապարտված էր անհաջողության:

Եկեղեցական տիրույթներն ու ունեցվածքը փրկելու Հայոց կաթողիկոսի ջանքերը

922 թ. մայիսի 1–923 թ. ապրիլի 20, Յուսուֆն ազատ է արձակվում և Նասր ալ-Սուբուքիին նշանակում Հայաստանի նոր ոստիկան[95]: Հայ ժողովրդի բոլոր խավերը՝ թե՛ աշխարհիկ, թե՛ հոգևոր, ենթակա էին նոր ու դաժան հարստահարությունների, քանզի Յուսուֆի բացակայության ժամանակ դանձարանը դատարկվել էր[96]: Այն անհրաժեշտ էր նորից լցնել՝ չխորշելով ապօրինի հարկեր գանձելուց և անմարդկային կեղեքումներից: Նասրը ձերբակալում

[91] Դրասխանակերտցի. 2010, 553:
[92] Դրասխանակերտցի. 2010, 554:
[93] Տեր-Ղևոնդյան. 1965, 135, Հայ ժողովրդի պատմություն. 1976, 62:
[94] Դրասխանակերտցի. 2010, 556–557:
[95] Իբն ալ-Ասիր. 1981, 174:
[96] Լեո. 1967, 567:

է Նախիջևանում իրեն ընծաներով ներկայացած Բաբկեն Սյունուն, ով կամենում էր տիրել Սիսականի իշխանությանը, և Սահակ Սյունուն: Նրանց բանտարկում է Դվինում՝ պահանջելով մեծ փրկագին: Գեղարդավանքում կամ Այրիվանքում լսելով Նասրի հալածանքների և կաթողիկոսանիստ եկեղեցու նկատմամբ կատարված ոտնձգությունների մասին՝ կաթողիկոսը ծանր ապրումներով խույս է տալիս նրանից: Տեղի միաբանները համոզում են հայրապետին հեռանալ ավելի ապահով վայր, քանի որ նրա ձերբակալությամբ Նասրը մեծ փրկագին կպահանջեր և անպատիժ կթալաներ հայրապետանոցի հարստությունները: Ստեղծված ընդհանուր ահաբեկման մթնոլորտում կաթողիկոսը հետևում է հոգևորականների հորդորներին և հեռանում դեպի լեռնային վայրեր՝ ստիպված լքելով եկեղեցու ունեցվածքը՝ «ի բաց զինչսն եւ զստացուածսն եւ զպաճար անասնոց», որոնք «կամաւորաբար տացուք յընծայումն հագարացւոյն Նարայ»: Այնուհետև իջնում է Գեղամա լճի ափերը և կանգ առնում Սևանա կղզում: Անմխիթար վիճակում էր հայտնվել կղզու կուսակրոն ճգնավորների մենաստանը՝ զրկվելով «ի բոլոր ստացուածոց՝ ասնոց եւ անասնոց եւ միայն զփրկութիւն անձանց հոգացեալ»:

Որպեսզի հայրապետական տիրույթներից հեռանալը չորակվի վախկոտություն, կաթողիկոսը բացատրում է իր արարքի դրդապատճառները. «Այլ ես աստանաւր ոչ եթէ յառժամանակեայ ի մահուանէ ինչ պակուցեալ խուսափեցի, այլ ի մտի եղեալ զանհնարին մոլեգնութիւն հեթանոսական մոլորութեանն, զի մի թերեւս թաքուցեալ հաղբք դիւախրոխտք պատրանաց նորա անկցի զմանկամբք եկեղեցւոյ, կամ թէ խառնումն ինչ չփոթից ընդ անարգութիւնս հեթանոսացն մեզ բերցի, որ արտաքոյ է բոլոր կրթական քաջողջութեան»[97]: Քիչ անց, երբ զգացմունքները տեղի են տալիս ողջամտությանը, նա մտածում է՝ չի կարելի բռնավորի կամքին թողնել կաթողիկոսարանը[98], ու որոշում է նորից վերադառնալ «մերձ ի հայրապետանոց եկեղեցին սուրբ» և փրկել սրբարանները պղծումից: Տեղափոխվում է Արագածի լանջերին գտնվող իր գնած կաթողիկոսական կալվածքը՝ Բյուրական «ամրոցիկը» և այնտեղից անմիջապես բանակցություններ սկսում Նասրի հետ: Դվինի կաթողիկոսարանում բնակվելու թույլտվության դիմաց Դրասխանակերտցին Նասրին խոստանում է «ըստ ձեռին բաւականի միշտ անդանդաղ եղէց զընծայս բարաւրութեանս առաքել» որպես տուրք: Արաբ ամիրան համաձայնություն է տալիս և նույնիսկ «յետկար երդման գրէ»: Գոհունակությամբ ընդունելով Նասրի երդմնագիրը՝ կաթողիկոսը մտածում է, որ վերջապես ապահովություն կտիրի «ի դրունս մերոցն սրբարանաց»[99]: Բայց Դվինի իսլամ հոգևորականները և,

---

[97] *Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 563–564:*

[98] *Արծրունի պատմիչի վկայությամբ՝ 893 թ. Դվինի երկրաշարժի հետևանքով ավերվում են կաթողիկոսարանն ու կաթողիկե եկեղեցին, այդ պատճառով Գևորգ Գառնեցի կաթողիկոսը հեռանում է Դվինից և հաստատվում Վաղարշապատում: Նա նստավայր է դարձնում Ներսես Բ կաթողիկոսի կառուցած Զվարթնոցի եկեղեցին (Ա ր ծ ր ո ւ ն ի եւ Ա ն ա ն ո ւ ն. 2010, 239): Ենթադրում են, որ Դվինի կաթողիկոսարանն արաբներն ավելի ուշ վերածել են մզկիթի (Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. 1952, 120):*

[99] *Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 565–566:*

հատկապես, ոմն «դատաւոր անկանոն կրաւնիցն Մահմետի», տարհամոզում են Նասրին, խորհուրդ տալիս ձերբակալել հայոց հոգևոր առաջնորդին և բռնագրավել նրա ունեցվածքը: Հայոց կաթողիկոսի խոսքերից հասկացվում է, որ իսլամ հոգևորականների և իր միջև գոյություն է ունեցել կրոնական անհանդուրժողականություն[100]: Նասրն արաբական զորաջոկատ է ուղարկում Այրիվանք, ավերում և կողոպտում այն, կոտորում վանականներին: Իմանալով այդ մասին՝ կաթողիկոսը Բյուրականից տեղափոխվում է Բագարան, «առ թագաւորեալն Աշոտ»՝ Աշոտ Երկաթի մոտ[101]: Բյուրականը ենթարկվում է կատաղի հարձակման: Կաթողիկոսի հետ եղած Սահակ եպիսկոպոսը հիվանդության պատճառով չի կարողանում փախչել: Նրա հետ մնում են կաթողիկոսական եկեղեցու քահանաներն ու սարկավագները: Վերջիններս որոշում են դիմադրել արաբներին, ուստի հավաքում են գյուղում եղած այն բոլոր մարդկանց, որոնք կարող էին զենք գործածել, և ամրանալով «ի դուռն ամրոցկանն»՝ սպասում են Նասրի զինվորներին: Թշնամին պաշարում է ամրոցը և «աւուրս եաւթն… ոչ կարէին ստանալ ամրոցին», մինչև որ ներսից «զողորմութիւն եւ զհաւատս ուրացեալ» մի քանի դավաճաններ մատնում են «ի ծածուկ ի գիշերի զամրոցն ի ձեռս թշնամեաց»[102]: Կատաղած թշնամին ներխուժելով՝ սրի է քաշում Սահակ եպիսկոպոսին, Մովսես, Սարգիս և Դավիթ քահանաներին, որոնք եղբայրներ էին, Սահակ կրոնավորին, Սողոմոն Սագաստանցի ճգնավորին ու Թեոդորոս սարկավագին, «որ վերակացու չինուածոյ եկեղեցւոյն էր եւ մարդիչ մարդկանն»: Սպանվում են նաև երկու հարյուր բյուրականցիներ: Փրկվում է միայն Գէորգ սարկավագը, որն էլ ամրոցի հերոսական և ողբերգական պաշտպանության սարսափելի եղելությունը փոխանցում է կաթողիկոսին: Բնակիչների մի մասը՝ այդ թվում կանայք, գերի են տարվում Դվին: Ազատ արձակված մահմեդական մշակներն առաջարկում էին հայերին «երթալ խառնիլ ի նոսա» և խուսափել մահից, սակայն քրիստոնյաները չեն համաձայնում: Նասրը կարգադրում է ազատ արձակել իր մոտ բերված գերիներին, իսկ նրանց, ովքեր մատնել էին ամրոցը «հրամայէ սրով սատակել»: Միայն երկու բյուրականցիներ՝ Կիրակոս զինվորը և Կիրակոս մշակը, մահմեդականություն չընդունելու համար գլխատվում են: Բյուրականի եղեռնագործությունը տեղի է ունեցել ահեկան ամսի 10-ին, իսկ երկու Կիրակոսների վկայությունը՝ նույն ամսի 17-ին[103]: Պատմիչի խոսքերով՝ այս իրադարձությունը-

---

[100] *Նասրը մոլեռանդ մահմեդական հոգևորականների ազդեցությամբ հայերին պարտադրում է ընդունել իսլամական կրոնը* (Գ ր ե հ. 1893, 96)*:*

[101] *Մ. Չամչյանը նշում է, որ կաթողիկոսը գնում է «առ Աշոտ բռնաւոր հորեղբօրորդի արքային Աշոտոյ» (Չ ա մ չ յ ա ն. 1984, 809): Մ. Օրմանյանն ու Լեոն այս Աշոտին նույնացնում են Աշոտ Շապուհյանի հետ (Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 1236, Լ ե ո. 1967, 569–570): Ա. Եղիազարյանն իրավացիորեն պնդում է, որ Հայոց կաթողիկոսն ապաստան է գտել ոչ թե Աշոտ Շապուհյանի, այլ՝ Աշոտ Երկաթի մոտ, որին պատմիչն անվանում է «զթագաւորազուն բողբոջ» (Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. 2016, 81: Հմմտ. Զ ա ր բ հ ա ն ա լ ե ա ն. 1897, 515):*

[102] *Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 571, Չ ա մ չ յ ա ն. 1984, 809:*

[103] *Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 1237–1238, Յ ա ս մ ա ւ ո ւ ր ք. ահեկի 12, որը համապատասխանում է ապրիլի 19-ին:*

ները տեղի են ունեցել «յերեքհարիւրերորդի եւթանասուներորդի երկրորդի (923) թուականութեանն Թորգոմեան եւ Ահկի ամսոյ, որ աւր տասն»[104]:

Հայրապետական աթոռի տեղափոխությունը Դվինից Աղթամար

Բյուրականի մարտերից հետո Նասրը «գիւղաւք եւ գերդաստանաւք» բռնագավթում է կաթողիկոսարանի ունեցվածքը: Առանց կաթողիկոսական աթոռի մնացած Դվինում հայ տարրը ավելի է թուլանում[105]: Հովհաննես կաթողիկոսը, որևէ տեղից օգնության հույս չունենալով, շուրջ մեկ տարի՝ 923 թվականից մինչև 924 թվականի «ամառնայինն յաշունն յեղանակեալ յեղափոխէր», մնում է Բագարանում՝ Աշոտ արքայի մոտ՝ նրանից առատաձեռնությամբ ստանալով «բազմաբար բարեաց մտաց բարութիւն եւ լրութիւն սիրոյ»[106]: 924 թ. աշնանը «առ ի նմանէն (Աշոտ Երկաթից – Վ. Ա.) յուղարկեալ» կաթողիկոսը գնում է Վասպուրական՝ «առ թագաւորն Հայոց Գագիկ»[107]: Վերջինս կաթողիկոսին ընդունում է «հոգեւոր սիրոյ հարազատութեամբ եւ հաստատուն հաւատով եւ աներկբայ յուսով» ու իր եղբայր Գուրգենի հետ նրան առնում վստահելի հովանու տակ: Այդ ժամանակ Դվինը դեռևս Նասրի տնօրինության տակ էր: Գագիկ Արծրունին հուսադրում է վտարանդի առաջնորդին, խոստանում ազատագրել Դվինի կաթողիկոսարանը՝ հավաստիացնելով, որ «ոգւով չափ ջան ի մտի եդեալ հոգասցի վասն դարձի մերոյ ի բնակութիւնս մեր»:

Հավանական է, որ Վասպուրական մեկնելու՝ Հովհաննես Դրասխանակերտցու վճիռը հետևանք էր այն հանգամանքի, որ 923 թ. նրա անհաշտ թշնամին՝ Յուսուֆը, ազատվել էր բանտից և վերստին նշանակվել Ատրպատականի ամիրա[108]: Վասպուրականն այդ ժամանակ Հայաստանի ամենասպահով վայրերից մեկն էր[109], իսկ թագավոր Գ. Արծրունին իր կարողություններով ոչ միայն չէր զիջում Բագրատունի գահակալին, այլև ինչ որ տեղ ավելի ազդեցիկ էր: Գաղտնիք չէ՝ Արծրունիներն ունեցել են Հայաստանի հոգևոր կենտրոնը իրենց տիրույթներ տեղափոխելու հավակնություններ, և պատահական չէ, որ կաթողիկոսը Վասպուրական տեղափոխվելու շարժառիթներից մեկն էլ նշում է՝ «ըստ միշտն հրաւիրանի կոչման նորա (Գագիկ Արծրունու – Վ. Ա.)»: Այս գործընթացի մեջ կա ուշագրավ մի վկայություն, որը, ինչպես իրավացիորեն նկատում է Աշոտ Երկաթի դարաշրջանը մանրակրկիտ քննության ենթարկած Ա. Եղիազարյանը, Դրասխանակերտցին չեշտում է հայոց հոգևոր աթոռի

---

[104] *Դրասխանակերտցի. 2010, 574, Զամչյան. 1984, 808: Մ. Օրմանյանի կարծիքով՝ Բյուրականի դեպքերը տեղի են ունեցել 926 թ. (Օրմանեան. 2001, 1238):*

[105] *Տեր-Ղևոնդյան. 1965, 138:*

[106] *Դրասխանակերտցի. 2010, 579:*

[107] *Վարդանյան. 1988, 122: Վ. Վարդանյանի կարծիքով՝ առանց Հայոց կաթողիկոսության նկատմամբ իրավասություններ ունենալու Գագիկ Արծրունին չէր կարող հավակնել հայոց գահին: Այդ պատճառով վերջինս հրավիրում է Դրասխանակերտցուն Աղթամար, որն ավելի է բարձրացնում Արծրունիների հեղինակությունը (Վարդանյան. 1980, 219):*

[108] *Իբն ալ-Ասիր. 1981, 174:*

[109] *Տեր-Ղևոնդյան. 1965, 140:*

երկփեղկման մեջ սերունդների կողմից հետագայում չմեղադրվելու համար: Կաթողիկոսը նշում է, որ ինքը Գ. Արծրունու մոտ «յուղարկեալ» էր անձամբ Աշոտ թագավորի կողմից: Երկարատև թափառումներից հետո, Դվինի թալանվածության և անապահովության պայմաններում կաթողիկոսի Վասպուրական տեղափոխվելը հայոց հոգևոր իշխանության ընտրությունն էր՝ հօգուտ Վասպուրականի թագավորության, ուստի հեռատես հոգևոր առաջնորդը իրեն ապահովագրում է Աշոտ Երկաթի հորդորին անսալու փաստով[110]*: Հայ մատենագիրները մեղադրական չեշտադրմամբ են հիշատակում Գ. Արծրունու թագավոր դառնալը՝ այդ փաստը համարելով հայոց միասնական թագավորության մասնատման պատճառ: Ուստի Բագրատունյաց տիրույթներից անցնելով Վասպուրական՝ կաթողիկոսն անցնում է Բագրատունի գահակալի հակառակորդի կողմը: Եվ, որպեսզի տարիներ հետո ընթերցողն իրեն չմեղադրի այդ քայլի համար, կաթողիկոսը գրում է, թե Աշոտ Երկաթն է իրեն ուղարկել Գ. Արծրունու մոտ:*

Գ. Արծրունին խոստանում է կաթողիկոսին վերադարձնել նրա ունեցվածքը: Մինչ այդ նա Գագիկին երբեք «Հայոց թագավոր» չէր կոչել, այլ միայն՝ «թագավոր»[111]*: Հայոց հայրապետն իր բազմաչարչար կյանքի վերջին շրջանն անցկացնում է Վասպուրականում, ուր տեղափոխել էր կաթողիկոսարանը: Հավանաբար, նա զբաղվել է նաև նոր կաթողիկոսարանի՝ Աղթամարի կաթողիկե եկեղեցու բարեկարգմամբ*[112]*: Այստեղ էլ ավարտում է իր իսկ բնորոշած՝ «հեգ և թշվառական» կյանքը: Թաղվում է Ջորովանքում, Գևորգ Գառնեցի կաթողիկոսի շիրիմի հարևանությամբ: Հայ մատենագիրների վկայություններով՝ Հովհաննես Դրասխանակերտցին աթոռակալել է 27 կամ 28 տարի*[113]*:*

Հովհաննես Դրասխանակերտցու մահվան թվականը վերջնականապես ճշտված չէ: Ըստ Մ. Զամչյանի՝ նա մեկնել է Վասպուրական 924 թ., որտեղ մահացել է 925 թ.[114]*: Մ. Օրմանյանը կարծում է, որ նա Վասպուրական է տեղափոխվել 927 թ., իսկ մահացել՝ 929 թ.*[115]*: Դրասխանակերտցու աշխատության վերջին հրատարակության խմբագրական նախաբանում Գ. Տեր-Վարդան-*

---

[110] Եղիազարյան. 2016, 82:

[111] Պատմության մեջ կաթողիկոսը մի քանի անգամ փոխում է Աշոտ Երկաթին և Գագիկ Արծրունուն տված իր բնորոշումները: Հավանաբար, նա հիշյալ գործիչներին գնահատել է առանձին քաղաքական դեպքերում՝ նրանց կատարած արարքներով (Драсханакертци. 1986, 14):

[112] Օրմանեան. 2001, 1240:

[113] Ստ. Օրբելյանի վկայությամբ՝ Դրասխանակերտցին աթոռակալել է 27 տարի (Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի. 1861, 366), Ասողիկի վկայությամբ՝ Հովհաննեսի աթոռակալությունը տևել է ԻԲ տարի (22), հավանաբար, թվատառերի շփոթություն կա և պետք է լինի ԻԸ տարի (28) (Ասողիկ. 2010, 742): Մխիթար Անեցու մոտ նշված է ԻԸ տարի (28) (Մխիթար Անեցի. 1983, 69): Ժամանակագիր Սամվել Անեցին նույնպես հիշատակում է ԻԸ տարի (28) (Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. 2014, 169, Գանձակեցի. 1961, 81–82):

[114] Զամչյան. 1984, 815–816:

[115] Օրմանեան. 2001, 1240, 1242:

յանը կարծիք է հայտնում, որ կաթողիկոսը Վասպուրական է մեկնել 927 թ. և այնտեղ վախճանվել 929 թ.[116]: Բազմակողմանիորեն վերլուծելով IX դ. վերջի և X դ. առաջին կեսի հայոց հայրապետերի ամթոռակալության ժամանակագրությունը՝ Ա. Եղիազարյանը հիմնավորում է, որ Դրասխանակերտցին վախճանվել է 925 թ.[117]:

Եզրակացություն

Հովհաննես Դրասխանակերտցին ամթոռակալել է դարաշրջանային բնույթ ունեցող մի պատմափուլում, երբ նորաստեղծ Հայոց պետականությունը դիմագրավում էր արտաքին և ներքին բարդ մարտահրավերներ, իսկ եկեղեցին ենթարկվում էր ծանր փորձությունների: Զարգացած ավատատիրության դարաշրջանին բնորոշ իշխանական տների հակամարտությունները պառակտում էին Հայաստանը և խաթարում նրա քաղաքական ամբողջականությունը: Այս վիճակն իրական վտանգ էր ծնում նաև Հայոց եկեղեցու անկախության և դավանական ինքնուրույնության համար: Ուստի Հայոց կաթողիկոսն ամեն գնով ստարում էր Հայաստանի քաղաքական միասնության պահպանմանը նպատակաուղղված ջանքերին: Հայրենասեր պատմիչը գործուն միջամտություն էր ունենում իշխանական հակամարտությունների լուծմանը, հաճախ էր հաշտեցնում թշնամացած իշխաններին, որոնք դեռևս չունեին ազգային համընդհանուր շահի գիտակցում և նորաստեղծ պետության ու միասնական հայրենիքի գաղափար: Որպես Հայոց հոգևոր առաջնորդ իրեն պատասխանատու էր զգում եղբայրասպան կռիվների համար՝ որակելով դրանք իբրև «աղետագոյն աղետք ազգապղծութեան»:

Հայոց հովվապետի գործունեության աշխարհագրությունն ընդգրկում էր ոչ միայն Հայաստանը, այլև Հարավային Կովկասը, քանի որ նա արաբների դեմ համակովկասյան դաշնակցության ձևավորման նախաձեռնողներից և գործուն դերակատարներից էր: Երկրում ստեղծված բարդ քաղաքական իրավիճակում և հակադիր կողմորոշումների հանգույցում, կարևոր նշանակություն ուներ Հայոց եկեղեցու ղեկավարի դիրքորոշումը: Իրատես մատենագիր-կաթողիկոսը գործնական քայլերի է դիմում հարևան մուսուլման ամիրաների հետ հաշտության եզրեր գտնելու և նրանց հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու ուղղությամբ: Նա մեկնում է Ատրպատականի Սաջյան ամիրա Յուսուֆի մոտ, սակայն նրա դիվանագիտական առաքելությունը Հայաստանի ներքին պառակտվածության պատճառով ցանկալի արդյունք չի տալիս: Այդքանից հետո կաթողիկոսը կողմնորոշվում է դեպի քրիստոնյա հարևանը, ինչը համահունչ էր Հայաստանին տիրելու Բյուզանդիայի արևելյան քաղաքականության ծրագրերին: Հայաստանի փրկությունը Դրասխանակերտցին տեսնում էր Բյուզանդիայի հովանավորությունը ընդունելու մեջ և այդ նպատակով նամակով դիմում է Բյուզանդական արքունիքին:

---

[116] *Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 317::*

[117] *Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. 2020, 174:*

Լինելով հայ-բյուզանդական քաղաքական դաշինքի ջերմ պաշտպան՝ անգիջում դիրքորոշում ուներ եկեղեցիների մերձեցման հարցում: Նրա համար քաղկեդոնականության դեմ պայքարն առաջին հերթին պայքար էր Հայոց պետության քաղաքական անկախության և Հայոց եկեղեցու դավանանքային ինքնուրույնության համար:

Հովհաննես Դրասխանակերտցին Հայոց եկեղեցու պատմության մեջ մնում է որպես հմուտ պատմաբան, լայնախոհ քաղաքական գործիչ ու դիվանագետ, եկեղեցու իրավունքների և դավանաբանության անգիջում պաշտպան, միասնության ու պետականության գաղափարախոս կաթողիկոս:

Վարդան Ալեքսանյան – պ. գ. թ., ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դասախոս, դոցենտ: Գիտական հետաքրքրությունը՝ Հայոց եկեղեցու պատմությունն ավատատիրության դարաշրջանում: Հեղինակ է 3 ուսումնամեթոդական ձեռնարկի և շուրջ 20 հոդվածի: vardanalexanyan406@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1968, Երկեր, հ. Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 693 էջ:

Ադոնց Ն. 2012, Երկեր, հ. Ե, Երևան, ԵՊՀ հրատ., 656 էջ:

Աճառյան Հ. 1946, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, Պետական համալսարանի հրատ., 741 էջ:

Անանեան Պ. 1997, Ներսես Շնորհալի, Հայ-բիւզանդական եկեղեցական յարաբերություններ. – «Բազմավէպ» (Վենետիկ), № 1–4, 49–76 էջ:

Առաքելյան Ա. 1959, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. Ա, Երևան, Հայպետ հրատ., 724 էջ:

Բախչինյան Հ. 1976, Հովհաննես Դրասխանակերտցու պատմության գրության ժամանակը. – «Բանբեր Երևանի համալսարանի», № 3, 122–126 էջ:

Բախչինյան Հ. 1973, Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի. – Էջմիածին, Գ, 43–47 էջ:

Բարթիկյան Հ. 1966, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը՝ ուղղված Հովհաննես Դրասխանակերտցուն և Սմբատ Ա թագավորին. – ՊԲՀ, № 4, 251–256:

Բարթիկյան Հ. 1996, Բյուզանդիան և հայ պետականությունը. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1, 17–29:

Գրիգորյան Գ. 1983, Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX–XI դարերում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 196 էջ:

Դանիելյան Է. 1977, Բյուզանդական արշավանքները Հայաստան (X դարի առաջին քառորդ). – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 2, 61–74:

Դարբինյան-Մելիքյան Մ. 1981, Դիտողություններ Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութեան» վերաբերյալ. – ՊԲՀ, № 3, 154–164:

Եղիազարյան Ա. 2011, Հայ Բագրատունիների տերությունը (885–908), Երևան, ԵՊՀ հրատ., 392 էջ:

Եղիազարյան Ա. 2014, Հայոց Սմբատ Ա թագավորի գահակալության շրջանի ժամանակագրությունը. – «Էջմիածին», № 5, 38–51 էջ:

Եղիազարյան Ա. 2016, Աշոտ Երկաթ. թագավոր հայոց, Երևան, ԵՊՀ հրատ., 117 էջ:

Եղիազարյան Ա. 2018, Վրաց Բագրատունիների թագավորության ձևավորման գործընթացը, Երևան, ԵՊՀ հրատ., 131 էջ:

Եղիազարյան Ա. 2020, IX դարի վերջի և X դարի առաջին կեսի Ամենայն հայոց կաթողիկոսների աթոռակալության ժամանակագրության շուրջ, Աստվածաբանական և կրոնական հոդվածների ժողովածու, Գ, 161–178:

Եղիշէի վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին. 1957, ի լոյս ընծ. բաղդատ. ձեռագրաց աշխատ.՝ Ե. Տէր-Մինասեան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 223 էջ:

Զարբհանալեան. 1897, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, Մխիթարեան տպ., 822 էջ:

Թեոփանեսի շարունակող. 1990, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 15, Բյուզանդական աղբյուրներ, Ե, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 438 էջ:

Թովմա Արծրունի եւ Անանուն. 2010, Պատմութիւն տանն Արծրունեաց, Մատենագիրք հայոց, հ. ԺԱ, ժ դար, Պատմագրութիւն, Գիրք Ա, Լիբանան-Անթիլիաս, ԵՊՀ հրատ., 795 էջ:

Իբն ալ-Ասիր. 1981, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Արաբական աղբյուրներ, Բ, թարգմ. բնագրից, առաջ. և ծանոթ.՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 442 էջ:

Լեո. 1967, Երկերի ժողովածու, հ. Բ, Երևան, Հայաստան հրատ., 786 էջ:

Կիրակոս Գանձակեցի. 1961, Պատմություն հայոց, աշխատ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 426 էջ:

Կոստանդին Ծիրանածին. 1970, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 6, Բյուզանդական աղբյուրներ Բ, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հր. Բարթիկյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 367 էջ:

Հայ ժողովրդի պատմություն. 1976, հ. Գ, Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում (IX դ. կեսերից մինչև XIV դ. կեսերը), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1023 էջ:

Հայոց պատմություն. 2014, հ. Բ, Միջին դարեր (IV–XVII դարի առաջին կես), Գիրք II, (IX դարի կես– XVII դարի առաջին կես), Երևան, Զանգակ-97 հրատ., 800 էջ:

Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, Վենետիկ, Սբ. Ղազարի տպ., 184 էջ:

Հովհաննիսյան Պ. 2014, Երկու ուղղություն X դարի հայ պատմագրության մեջ. – «Հայագիտության հարցեր», 108–120 էջ:

Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ. 1956, կազմեց՝ Վ. Հակոբյան, հ. Բ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 684 էջ:

Ղաֆադարյան Կ. 1952, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 159 էջ:

Ղաֆադարյան Կ. 1982, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. II, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 163 էջ:

Մովսէս Խորենացի. 1991, Պատմութիւն հայոց, քնն. բնագիրը և ներած.՝ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 485 էջ:

Մխիթար Անեցի 1983, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, թարգմ. Հ. Մարգարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 140 էջ:

Յայսմաւուրք. 1730, Մարերի Ի և մայիսի ԻԷ, վկայաբանութիւն սրբոյն Թէոդորայ և Դիդիմայ և Դաւթի, Կ. Պոլիս:

Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտւոյ. 2010, Պատմութիւն Հայոց, Մատենագիրք հայոց, ԺԱ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, գիրք Ա, Անթիլիաս–Լիբանան, ԵՊՀ հրատ., 795 էջ:

Չամչյան, Մ. 1984, Հայոց պատմություն, հ. Բ, Երևան, ԵՊՀ հրատ., 1060 էջ:

Սահակյան Ա. 2005, Երվանդյան մայրաքաղաքի հիմնարկեքի պաշտամունքային հայեցակարգն ըստ Մ. Խորենացու (Երվանդակերտ, Դրասխանակերտ, մ. թ. ա. III–II դդ.) | ՀՀ ԳԱԱ Զեկույցներ, № 3 (հատ. 105) 8 էջ:

Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. 2014, աշխատ. Կ. Մաթևոսյանի, Երևան, Նաիրի հրատ., 502 էջ:

Սարգսյան Ա. 1991, Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը» և Մովսես Խորենացին, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 328 էջ:

Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ. 2010, Պատմութիւն Տիեզերական, Մատենագիրք հայոց, ԺԵ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, գիրք Բ, Անթիլիաս-Լիբանան, ԵՊՀ հրատ., 893 էջ:

Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական. 1861, լոյս ընծայեաց, Մ. Էմին, Մոսկվա, Տպարան Լազարեան ճեմարանի, 386 էջ:

Վարդանյան Վ. 1988, Հովհաննես Դրասխանակերտցու կյանքի վերջին շրջանի մասին. – ՊԲՀ, № 3, 114–125 էջ:

Վարդանյան Վ. 1969, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը. 908–1021 թթ., Երևան, ԵՊՀ հրատ., 290 էջ:

Վարդանյան Վ. 1980, Վասպուրականի 910–930-ական թթ. պատմության շուրջ. – ՊԲՀ, № 1, 215–222:

Տեր-Ղևոնդյան Ա. 1965, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 312 էջ:

Օրմանեան Մ. 2001, Ազգապատում, հ. Ա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1870 էջ:

Васильев А. 1902, Политические отношения Византии и арабов за время Македонской династии (867–959). – Записки историко-филологического факультета императорского С.-Петербургского университета, ч. LXVI. СПб., Типография И. Скороходова, 220 с.

Грен А. 1893, Династия Багратидов в Армении. – «Журнал министерства народного просвещения» (СПб.), ССХС, № 11., Типография В. Балашева, с. 52–139.

Драсханакертци Иованнес. 1986, История Армении, пер. с древнеармянского, вступ. статья и коммент. М. Дарбинян-Меликян. Ереван, «Советакан грох», 395 с.

Периханян А. 1993, Материалы к этимологическому словарю древнеармянского языка. Ереван, Инст. востоковедения НАН РА, 144 с.

Тер-Гевондян А. 1977, Армения и арабский халифат. Ереван, Изд. АН АрмССР, 320 с.

Юзбашян К. 1988, Армянские государства в эпоху Багратидов и Византия IX–XI вв. М., «Наука», 300 с.

Yovhannes Drasxanakertci. 1987, History of Armenia, translation and com. by Rev. Krikor H. Maksoudian, Scholars press, Atlanta, Georgia, 372 p.

ОВАННЕС ДРАСХАНАКЕРТЦИ – КАТОЛИКОС-ИДЕОЛОГ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ

ВАРДАН АЛЕКСАНЯН

Резюме

Ключевые слова: Ованнес Драсханакертци, Смбат I, Ашот Железный, Юсуф, единство, примирительное посредничество, князья, межкняжеские противоборства, политическая целостность, идеолог, гонение, переписка, Византия, Двин, Васпуракан, арабские набеги.

Ованнес Драсханакертци (898–925) возглавлял католикосский престол в исторический период эпохального характера, когда новосозданная армянская государственность столкнулась со сложными внешними и внутренними вызовами, а церковь подверглась суровым испытаниям. Конфликты правящих домов, характерные для эпохи развитого феодализма, разделили Армению и подорвали ее политическую целостность. Эта ситуация представляла реальную угрозу независимости страны и конфессиональной независимости Армянской церкви. Поэтому армянский патриарх поддержал усилия, направленные на сохранение политического единства Армении любой ценой. Патриот-историк активно вмешивался в решение межкняжеских конфликтов, часто мирил враждующих между собой князей, у которых еще не было сознания всеобщего национального интереса и идеи вновь созданного государства и единой родины.

География деятельности армянского патриарха включала не только Армению, но и Южный Кавказ. Он был одним из инициаторов и активных участников формирования общекавказского союза против арабов. Католикос-летописец предпринимает практические шаги, чтобы заключить мир с соседними мусульманскими эмирами и установить с ними дружеские отношения. С этой целью он отправляется к амиру Юсуфу Атрпатакана, но его дипломатическая миссия не дает желаемого результата из-за внутреннего раскола Армении. После этого он ориентировался в сторону христианского соседа, что полностью соответствовало планам восточной политики Византии по господству над Арменией. Драсханакертци видел спасение Армении в принятии покровительства Византии и с этой целью написал письмо византийскому двору. Являясь горячим приверженцем

армяно-византийского политического союза, он занимал бескомпромиссную позицию в отношении сближения церквей. Для него борьба против халкидонизма была прежде всего борьбой за политическую независимость армянского государства и конфессиональную независимость Армянской церкви. Ованес Драсханакертци остался в истории Армянской церкви искусным историком, широко мыслящим политиком и дипломатом, бескомпромиссным защитником прав и вероучения Армянской церкви, идеологом единства и государственности.

Вардан Алексанян – к. и. н., преподаватель кафедры истории Армении и обществоведения Иджеванского филиала ЕГУ, доцент. Научные интересы: история Армянской церкви в период феодализма. Автор 3 учебно-методических пособий и около 20 статей. vardanalexanyan406@gmail.com

HOVHANNES DRASKHANAKERTSI, CATHOLICOS-IDEOLOGIST OF ARMENIAN STATEHOOD

VARDAN ALEXANYAN

S u m m a r y

Keywords: Ovannes Draskhanakertci, Smbat I, Ashot the Iron, Yusouf, solidarity, conciliatory mediation, princes, inter-princely confrontations, political integrity, ideologist, persecution, correspondence, Byzantium, Dvin, Vaspurakan, Arab raids.

Hovhannes Draskhanakertsi headed the catholicos throne during an epochal historical period, when the newly created Armenian statehood faced difficult external and internal challenges, and the church was severely tested. The conflicts of the ruling houses, characteristic of the era of developed feudalism, divided Armenia and undermined its political integrity. This situation posed a real threat to the independence and confessional independence of the Armenian Church. Therefore, the Armenian Patriarch supported the efforts aimed at preserving the political unity of Armenia at any cost. The Patriot Historian actively intervened in resolving inter-princely conflicts, often reconciling princes who were at war with each other, who did not yet have a consciousness of a universal national interest and the idea of a newly created state and a single homeland.

The geography of the activities of the Armenian Patriarch included not only Armenia, but also the South Caucasus. He was one of the initiators and active participants in the formation of a pan-Caucasian alliance against the Arabs. The realistic chronicler takes practical steps to make peace with neighboring Muslim emirs and establish friendly relations with them. To this end, he goes to emir Yusuf Atrpatakan, but his diplomatic mission does not give the desired result due

to the internal split of Armenia. After that, he orientated on the Christian neighbor, which fully corresponded to the plans of the Eastern policy of Byzantium to dominate Armenia. Draskhanakertsi saw the salvation of Armenia in accepting the patronage of Byzantium and for this purpose wrote a letter to the Byzantine court. Being an ardent supporter of the Armenian Byzantine political union, he took an uncompromising position regarding the rapprochement of the churches. For him, the struggle against Chalcedonism was primarily a struggle for the political independence of the Armenian state and the confessional independence of the Armenian Church. Hovhannes Draskhanakertsi remained in the history of the Armenian Church as a skilled historian, a broad-minded politician and diplomat, an uncompromising defender of the rights and dogma of the Armenian Church, an ideologist of unity and statehood.

Vardan Alexanyan – Candidate of Historical Sciences, Associate Professor, Lecturer at the Department of Armenian History and Social Science, Branch of YSU in Ijevan. Scientific interests: History of the Armenian Church in the Middle Ages. Author of 3 educational-methodical manuals and about 20 scientific articles. vardanalexanyan406@gmail.com